

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Փուլին-Փաշինեան Հանդիպման Եզրակացութիւնները

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան մեկնած էր Մոսկուա՝ մասնակցելու համար ԱՊՀ պետութիւններու ղեկավարներու խորհուրդի նիստին: Այս առթիւ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փուլին Քրեմլինի մէջ ընդունելով Հայաստանի վարչապետին խօսած է երկու երկիրներուն միջեւ տնտեսական կապերու յարաճուն զարգացման մասին, շրջանցելով քաղաքական գետնի վրայ յառաջացած բաժանումը, որ ծայր առաւ 2020-ի 44-օրեայ պատերազմէն ասդին:

Առաջին անգամ չէ, որ նախագահը Փուլին հրապարակաւ կը խօսի երկու երկիրներուն միջեւ առեւտրական շրջանառութեան մասին ու գովասանքով կ'արտայայտուի Հայաստանի մէջ վերջին տարիներուն արձանագրուող տնտեսական աճի մասին: Յստակ է, որ Ռուսաստանի նախագահը տողատակով կ'ուզէ հասկնել Հայաստանի ժողովուրդին, թէ տնտեսութեան մէջ տեղի ունեցող յաջողութիւններուն համար Հայաստան կը պարտի Ռուսաստանին եւ Ռուսաստանի ղեկավարած Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցութեան:

Քրեմլինի ղեկավարութիւնը կը գիտակցի, որ կորսնցուցած է Հայաստանի մէջ իր ունեցած քաղաքական գրեթէ բոլոր լծակները, որոնք կային տակաւին մի քանի տարի առաջ: Այժմ մնացած է միայն Տնտեսական կապը, որ պետք է ընդունիլ, որ բաւական օգուտներ կ'ընձեռէ Հայաստանին ու Մոսկուան տակաւին յոյս ունի, որ Հայաստանը կրնայ պահել իր ուղեծիրին մէջ եւ զինք վերադարձնել քաղաքական նոյն դաշտը:

Ռուսաստանի հետ տնտեսական կապերու խզումը ներկայիս չի բխիր Հայաստանի շահերէն եւ ան կը փորձէ տարանջատել տնտեսականը՝ քաղաքականէն: Նախագահ Փուլին կեդրոնաձեռքով տնտեսական հարցերուն վրայ չի նշանակեր որ Մոսկուա գոհ է Հայաստանի վարած արտաքին քաղաքականութենէն, սկսած Եւրոպական միութեան հետ ստեղծուած սերտ կապերով, Ֆրանսայի, Հնդկաստանի եւ այլ երկիրներու հետ ռազմական գետնի վրայ համագործակցութեամբ եւ Միացեալ Նահանգներէն եկող տնտեսական օժանդակութեամբ:

Թէեւ նախագահ Փուլին իր հրապարակային ելոյթներուն մէջ

Փաշինեանի Հետ Հանդիպումի Ընթացքին Փուլին Յայտնած է Ռուսաստանի Եւ Հայաստանի Միջեւ Յարաբերութիւններու Յարաշարժ Զարգացման Մասին

Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փուլին Քրեմլինի մէջ ընդունած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ զրոյցի ընթացքին նշած էրկու երկիրներուն միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւններու յարաշարժ զարգացումը:

«Անցեալ տարի առեւտրաշրջանառութիւնը հասած է 7,4 միլիարտ տոլարի, իսկ այս տարուայ առաջին կիսամեակին աճած է 2,5 անգամ՝ գերազանցելով 8,3 միլիարտ տոլարը», - նշած է ՌԴ նախագահը: Ան ընդգծած է, որ եթէ այս կշռոյթը շարունակուի, ապա տարեկան զարգացումը շրջանառութիւնը կրնայ հասնիլ մրցանշային 14-16 միլիարտ տոլարի:

Աւելի վաղ Փուլին հանդիպած էր Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

Ինչպէս լրագրողներուն յայտնած է պետութեան ղեկավարի օգնական Եուրի Ուշաքովը, Մոսկուան աշխոյժ դեր կը խաղայ Պաքուի եւ Երեւանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործին մէջ:



Փուլին Քրեմլինի մէջ կ'ընդունի Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին

Ալիեւն ու Փաշինեանը ժամանած են Մոսկուա՝ մասնակցելու ԱՊՀ պետութիւններու ղեկավարներու խորհուրդի նիստին, որուն նախագահած է Փուլին: Միջոցառման կը մասնակցին նաեւ Պելաուսիոյ, Ղազախստանի,

Տաճիկստանի, Ղրղզստանի, Ուզպեքիստանի եւ Թուրքմենիստանի նախագահները: Երկուշաբթի՝ Հոկտեմբեր 7-ին, պետութիւններու ղեկավարները հաւաքուած էին ոչ-

Մաքրոն Փաշինեանին Վերահաստատած է Ֆրանսայի Վճռականութիւնը՝ Աջակցելու ՀՀ Տարածքային Անբողջականութեան



Նախագահ Եմանուէլ Մաքրոն Ելիզէի պալատին առջեւ կը դիմաւորէ վարչապետ Նիկոլ Փաշինեանին

Ելիզէի պալատը հաղորդագրութիւն տարածած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ նախօրէին ունեցած հանդիպման վերաբերեալ:

Ըստ հաղորդագրութեան՝ Ֆրանսայի նախագահը աշխատանքային ճաշ ունեցած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ, որուն ընթացքին ունեցած զրոյցին Մաքրոն շնորհակալութիւն յայտնած է Հայաստանի վարչապետին Ֆրանսֆոնի գազաթափողովին ներկայ

գտնուելու համար: «Շարունակելով Սեպտեմբեր 25-ին ՄԱԿ-ի Գլխաւոր Վեհաժողովի իր ելոյթը՝ նախագահը վերահաստատած է Ֆրանսայի վճռականութիւնը՝ աջակցելու Հայաստանի ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի՝ խաղաղութեան եւ ժողովրդավարութեան ձգտումներուն», - կ'ըսուի հաղորդագրութեան մէջ: Ֆրանսայի նախագահը վերահաստատած է իր հաւատարմու-

թիւնը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ընթացող խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւններուն, որոնք խիստ համապատասխան պիտի ըլլան միջազգային իրաւունքին եւ տարածաշրջանի բոլոր ժողովուրդներու շահերուն:

«Հանրապետութեան նախագահը եւ Հայաստանի վարչապետը քննարկած են պաշտպանութեան, փոխադրութեան, ուժանիւթի, ինչպէս նաեւ կրթութեան եւ մշակութի ոլորտներուն մէջ երկկողմ համագործակցութեան հիմնական հարցերը», - կը նշուի Ելիզէի պալատի հաղորդագրութեան մէջ:

Երկու երկիրներուն ղեկավարները պայմանաւորուած են նաեւ շարունակել ամրապնդել երկկողմ համագործակցութիւնը Ֆրանսայի եւ Հայաստանի միջեւ:

Յիշեցնենք՝ հայկական կողմի հաղորդագրութեան համաձայն ալ՝ գրուցակիցները քննարկած են Հայաստան-Ֆրանսա բազմաոլորտ օրակարգին վերաբերող հարցեր, ընդգծուած է բարեկամական յարաբերութիւններու զարգացման ու ամրապնդման ուղղուած հետեւողական քայլերու իրականացման շարունակականութեան կարեւորութիւնը:

Վարչապետ Փաշինեան կարեւորած է բարեկամ Ֆրանսայի մշտական աջակցութիւնը եւ ընդգծած է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ երկկողմ հետաքրքրութիւններ կայացնող բոլոր ոլորտներու զարգացման ուղղուած քայլերու իրականացման հարցով:

ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՎ ՍՄԱՌՈՒՄ

Ընդդիմութիւնը «Թեժ Աշուն» եր Խոստանում. Աջապահեանը «Իր Բաժին Բենգինը»«Պզզացրեց»

ՀԵՂԻՆԷ ՍԱՆՈՒԿԵԱՆ

«Սրբագան» կոչուող շարժման մասին մեր նախորդ հրատարակած հոդուածներում բարեկամաբար առաջարկել էինք այս կանխատեսելի ելքով ականատեսացնել կազմակերպիչներին դադարել զբաղուել «սիւղիփոսեան աշխատանքով»՝ փակել «գրասենեակը», տուն ուղարկել աշակերտներին եւ նախապատրաստուել վալիք խորհրդարանական ընտրութիւններին:

Նաեւ կանխատեսել էինք՝ քաղաքական մարզինալ եւ նախկին նախագահներին կողմից ուղղորդուող ուժերի ներկայացուցիչները, որոնք հաւաքուել են վազգէն (Բագրատ) Գալստանեանի շուրջ եւ «Քաղաքական Խորհուրդ» ձեւաւորել, չեն յաջողելու եւ շարժման կէսից վերածուելու են մերօրյայ «Բաբելոնի աշտարակաշինարարներ»:

Ինչո՞ւ, քանի որ հնարաւոր չէ նոյն դէմքերով՝ դերասանական անտաղանդ կազմով ու «պրոֆեսիոնալ» ռեժիսորով, նոյն պիեսը բեմադրել ու ակնկալել ցնցող արդիւնք եւ հանդիսատեսի ծափեր: Ընդ որում՝ արդէն երրորդ անգամ:

Մեր «մարզարէութիւնը», ինչպէս դէպքերի ընթացքն է ցոյց տալիս, կարծէք իրականութիւն է դառնում: Ականատեսն ենք «թէժ աշնան» մասին ընդդիմութեան խոստման կատարմանը, բայց ոչ թէ կուռ ու բիւրեղացած քաղաքական թիմի, մէկ մարդու պէս ոտքի ելած ժողովրդի եւ հրապարակնե-

րում մոլեգնող բազմամարդ հանրահաւաքների, այլ՝ ընդդիմութեան ներքին խոհանոցում բռնկուած հրդեհի եւ այլեւս մարած շարքերի տեսքով:

Ընդդիմութեան «տանը» բռնկուելիք հրդեհի առաջին «կայծերը» նկատելի էին դեռ Յունիսի սկզբից, երբ «լիմարների նաւը» (տես՝ Հ. Բոսիսի համանուն կտաւը) լքեց շարժման համաառջնորդ Սուրէն Պետրոսեանը, Սեպտեմբերի 20-ին էլ ԱժԲ-ն «ցտեսութիւն» ասաց շարժմանը՝ որոշումը պատճառաբանելով մասնաւորապէս «վերջերս ի յայտ եկած շարժման որոշակի անընդունելի դրսեւորումներով»:

Ս. Պետրոսեանը, ինչպէս արդէն յայտնել ենք, քողարկեց շարժման կուլիաներում ծաւալուող զգվուտոցն ու սողոմգոմօրական կրքերը, եւ ակնյայտ դարձաւ, որ Գալստանեանն ընդամէնը շիրմա է, որի հետեւում ծուարած նախկին ռեժիմի պարագլուխներն ու նրանց աղէպտները կատաղի պայքար են մղում ոչ այնքան գլխաւոր «թիրախ»-ի՝ իշխանութեան դէմ, այլ՝ իրար՝ նուաճելու «առաջին պլանի լաւագոյն դերասանի», ներողութիւն՝ ընդդիմադիրի տիտղոսը:

Այս անառողջ կրքերը, ի դէպ, նկատելի էին նաեւ «դիմադրութեան» շարժման օրերին, երբ նախկին նախագահներին միջեւ ներքին մրցակցութիւնը՝ լինել շարժման առաջին պլանում, ուղղակի աչք էր ծակում, ինչն էլ յետագա-

յում հանեց շարժման «աչքը»՝ դատապարտելով կատարեալ ձախողման: Ահա թէ ինչու «դիմադրութեան շարժում-2»-ը որոշեց հեռու մնալ նախկին նախագահների ստուերից, սակայն յայտնի է, չէ՞, որ «ծածուկ ոչինչ չկայ, որ չյայտնուի, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացուի եւ ի յայտ չգայ»:

Ի դէպ, շարժման կազմակերպիչներում տիրող «արտակարգ իրավիճակի» մասին, բայց փոքր-ինչ այլ համատեքստում մօտ երկու շաբաթ առաջ աղաղակել էր ՀՀԿ-ական էդուարդ Շարմազանովն ու յորդորել ընդդիմութեան իր գործընկերներին իրար վրայ «Չուր չպզզացնել»:

«Հիմա մեր տունը վառուած ա, որպէսզի տունը յանգցնենք, էդ հրշէջները, որոնցից մէկն էլ ՀՀԿ-ն ա, չպիտի Չուրը պզզցնեն իրար վրայ, այլ պտի էդ տան կրակը մարէն: Իմ մօտ նենց տպաւորութիւն ա, որ մենք էդ շլանգը ձեռներս, մէկն էլ՝ մենք, էդ կրակը ուզում ենք մարենք, հետեւից մեր վրայ պզզցնում են: Հերիք ա, տղաներ ջան, իրար վրայ պզզցնէք, ընդդիմութեան մեր գործընկերներին եմ ասում: Ուզու՞մ ենք իշխանափոխութիւն, գիտակցու՞մ ենք, որ իշխանափոխութիւնն ա էդ աղէտից պրծնելը, բերէք շլանգով իրար վրայ հերիք Չուր պահենք ու վարկաբեկենք», յորդորել էր կարկառուն ՀՀԿ-ականը:

Թէ ովքե՞ր էին այդ անկարգ տղաները, կարելի է միայն ենթադրել:

Շար.ը էջ 19

Թուրքիան ԴԷ՞մ է Ալիեի Մանիպուլիացիաներին

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Ատրպէյճանի ԱԳՆ-ն արձագանքել է սահմանազատման յանձնաժողովների Կանոնադրութեան վերաբերեալ Հայաստանի սահմանադրական դատարանի որոշմանը: Փորձագիտական տեսակէտ է շրջանառուել, որ այսօր Սահմանադրական դատարանը ենթակայ է իշխանութիւններին, վաղը նոր իշխանութիւնը կարող է այլ մօտեցում ունենալ:

Ատրպէյճանի ԱԳՆ արձագանքը մի շատ ուշագրաւ նրբերանգ ունի. Պաքուն յիշեցնում է, որ Հայաստանի Սահմանադրութիւնը «նաեւ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ յաւակնութիւն ունի»: Ինչն է իշխում Ալիեին դրդել, որ նման «մտահոգութիւն» հրապարակայնացնի: Միթէ՞ թուրքիան այնքան «թուլացած» է, որ Հայաստանի հետ բանակցութիւններում ի գօրու չէ բարձրացնել այդ խնդիրը:

Տպաւորութիւն է, որ Երեւանի կողմից «Արեւմտեան Հայաստանի նկատմամբ հաւակնութեան» մասին ակնարկի հասցէատէրը թուրքիան է: Նիւ Եորքում փաշինեան-էրտողան հանդիպմանը կողմերը վերահաստատել են բանակցութիւններին առանց նախապայմանների շարունակելու մտադրութիւնը:

Ճիշտ է, թուրքիան որեւէ գործնական քայլ չի ձեռնարկում եւ Հայաստանի հետ սահմանի բացումը շարունակում է պայմանաւորել հայ-ատրպէյճանական կարգաւորմամբ, բայց Անքարան, կարծես, ցոյց է տալիս, որ Ալիեի մանիպուլիացիաներից «յոզնել է»:

Յիշեցնելով, որ Հայաստանը «տարածքային պահանջներ ունի նաեւ Թուրքիայից»՝ Պաքուն ենթատեքստով փորձում է արգելափակել հայ-թուրքական յարաբերութիւնների որեւէ առաջընթաց:

Կա՞ն թուրք-ատրպէյճանական սկզբունքային տարաձայնութիւններ՝ դժուար է միանշանակօրէն հաստատել կամ հերքել: Բայց «Արեւմտեան Հայաստանի» մասին Ատրպէյճանի ԱԳՆ յիշեցումը թոյլ է տալիս եզրակացնել, որ հայ-ատրպէյճանական կարգաւորման շուրջ Պաքուի մանիպուլիացիաները թուրքիային առնուազն այս փուլում ձեռնտու չեն:

Ոչ ոք այնքան լաւատես չէ, որպէսզի ասի, թէ Անքարան պատրաստ է կամ կարող է Պաքուի նկատմամբ «փափուկ ուժ» կիրառել, որպէսզի արագացնի հայ-ատրպէյճանական կարգաւորումը: Թուրքիան մեծ հաշուով սողորուած չէ Հայաստանի հետ սահմանի բացման, դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման հեռանկարով:

Բայց թուրքիան չի կարող չտեսնելու տալ, որ Հայաստանի հետ Ատրպէյճանի յարաբերութիւնների կարգաւորումը խոչընդոտում է Մոսկուան, եւ այդ իրավիճակը Պաքուին աւելի է հեռացնում Անքարայից՝ վտանգելով «թուրքական աշխարհ» նախագիծը, ինչն

իր հերթին էրտողանի գլխաւոր յաղթարթուղթն է մի կողմից Ռուսաստանի, միւս կողմից՝ Միացեալ Նահանգների, Եւրամիութեան եւ Չինաստանի հետ յարաբերութիւններում:

Ռուսաստանի եւ Ատրպէյճանի ռազմաքաղաքական սերտաճումը հակասում է թուրքիայի տարածաշրջանային շահերին, շատ որոշակի առումով խզում համաթուրքական համերաշխութիւնը. Ատրպէյճանում Ռուսաստանի կոշտ ներկայութիւնը շատ որոշակի առումով թուրքիա-կեդրոնական Ասիա-Չինաստան-Փաքիստան հաղորդակցութեան պահանջարկիւն է:

Մի փուլում, երբ թուրքիան ձգտում է յարաբերութիւններ բարելաւել Միացեալ Նահանգների եւ Եւրամիութեան հետ, իշխում Ալիե-ը, ընդհակառակը, ուժային այդ կեդրոններին բաց մարտահրաւէր է նետում եւ միաժամանակ ձգտում ստանձնել Անքարայի Եւրասիական կողմնորոշման երաշխաւորի գործառնիթ՝ ի շահ Ռուսաստանի:

Ինչ որոշում կ'ընդունի Ռեջեփ Թայիփ էրտողանը՝ կանխատեսում հնարաւոր կը լինի անել Պրիքս-ի գազաթափողովից յետոյ: Բայց մի հարցում, կարծես, թուրքիայի դիրքորոշումը պարզ է. Անքարան չի գնայ ՆԱԹՕ-ից հեռանալու քայլի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՍԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետերը

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՍԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$75.00, \$135.00 (First Class)
Canada \$ 225.00 (Air Mail)
Overseas \$400.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ


Բագրատ Սրբազանը Չի Կրնար Ազատուիլ Նախկին Նախագահներու Ուրուականներէն, Կ'ըսէ Շիրակի Թեմի Առաջնորդը

Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեանը գոհ չէ Հանրայինի ուղիղ եթերով վազգէն (Բագրատ) Գալստանեանի ուղերձէն:

«Որ ասեմ գոհ եմ՝ սուտ ասած կը լինեմ, այնտեղ իր ելուցի մէջ զգացուած էր յուզականութիւն եւ մի քիչ սթափութեան պակաս, ցաւօք», - NEWS.am-ի հետ զրոյցին ըսած է ան:

«Ես կարծում եմ, այո՛, պէտք է ինչ-որ բան փոխել, բայց պէտք է Բագրատ սրբազանը դրան անդրադառնայ: Ես ակնարկել եմ այս բոլոր ամիսներին, թէ ինչն է պատճառը իր որոշակի անյաջողութեան: Հիմա թերեւս ակնաբացայտ կարող եմ ասել: Հիմնական պատճառը նախկին նախագահների ստուերն է եւ ուրուականը: Այդ ուրուականներից չի կարող ազատուել Բագրատ սրբազանը, այդ ուրուականների հեղինակներն իրենք պէտք է յայտարարեն իրենց հեռացման մասին եւ իրապէս հեռանան: Հայրենիքի փրկութիւնը դա պահանջում է, ու եթէ իրենք դա չեն անում, ուրեմն հայրենիքի փրկութեան մասին չեն մտածում, իրենք մտածում են իշխանութեան վերադառնալու կամ, այսպէս ասած, ընդդիմութեան իշխանութիւնը պահպանելու համար»:

Ան շեշտած է, որ ե՛ւ երկրորդ, ե՛ւ երրորդ նախագահները պէտք է հեռանան քաղաքական ասպարէզէն. «Սթափ բանականութիւնն ու հաշուարկը դա է պահանջում: Եթէ իրենք դա չզօրեն, նշանակում է՝ ոչ մի բան էլ չեն հասկանում: Ե՛ւ երկրորդ նախագահը, ե՛ւ իր որդին պէտք է յայտարարեն եւ փաստացի հեռանան: Նոյնը վերաբերում է երրորդ նախագահին, նա պէտք է



Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեան


բաց թողնի այդ ՀՀ-ին: Ինչպէս պատահական մտաւ, այդպէս պատահական էլ պէտք է դուրս գայ: Այլապէս ոչինչ հնարաւոր չէ»:

Ըստ Շիրակի թեմի առաջնորդին՝ վերջիններու սխալներուն պատճառով ժողովուրդին ճնշող մեծամասնութիւնը անոնց անունը լսել չ'ուզեր:

«Պէտք է դա հասկանան, իսկ իրենք անում են հակառակը, փորձում են Բագրատ սրբազանի մօտ ստեղծել այն տպաւորութիւնը, որ «առանց մեզ ոչինչ էլ չես կարող անել, միջոցներին մենք ենք տիրապետում»»:

Միքայէլ սրբազանը համոզմունք յայտնած է, որ եթէ նախկին նախագահները քաղաքական ասպարէզէն հեռանան, պայքարը անպայման կը յաջողու. «Զարմանալի է, որ մեր սիրելի Բագրատ սրբազանը դրա ընկալումը չունի»:

Յայտնի է, Թէ Որքան Մարդ Մասնակցած Է Բագրատ Գալստանեանի Հանրահաւաքներուն



Կիրակի երեկոյեան, Հանրապետութեան հրապարակին վրայ մեկնարկեց Բագրատ Գալստանեանի հանրահաւաքը, որուն մասին վերջինս յայտարարեց նոյնիսկ Հանրային հեռուստաընկերութեան եթերով:

Իրաւապահ մարմիններուն մօտ կանգնած մեր աղբիւրներէն MediaNews-ին յայտնի դարձաւ, որ ժամը 19:30-ի դրութեամբ հանրահաւաքին կը մասնակցէր ընդամէնը 1260 մարդ:

Իրազեկ Քաղաքացիների Միաւորումը հաղորդագրութիւն տարածած է «Սրբազան պայքար» շարժման՝ Հոկտեմբեր 2-ի հանրահաւաքի մասնակիցներու քանակին վերաբերեալ:

«Սրբազան պայքար» շարժումը Հանրապետութեան հրապարակին վրայ ժամը 18:30-էն հրաւիրած էր հանրահաւաք:

Սեպտեմբերի 2-ի հանրահա-

ւաքին իրազեկ Քաղաքացիների Միաւորումը օդային նկարահանման միջոցով իրականացուցած է հաւաքի մասնակիցներու հաշուարկ, ըստ որուն, պարզուած է, որ ժամը 19:13-ի դրութեամբ հանրահաւաքի վայրին եւ յարակից տարածքներուն մէջ գտնուած է շուրջ 1905 մարդ:

Միւս կողմէ, «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժման նախաձեռնող խումբին կողմէ կազմակերպուած հաւաքներուն մասնակցութիւն ապահովելու նպատակով քաղաքացիներուն գումար բաժանելու դէպքերու առթիւ յարուցուած քրէական գործերով մեղադրական եզրակացութիւնները Լոռի մարզի դատախազութիւնը ուղարկած է դատարան: Խօսքը մասնաւորապէս երկու անձի վերաբերեալ մեղադրական եզրակացութեան մասին է, որոնք ուղարկուած են Լոռի մարզի քրէական դատարան:

Դատախազութիւնը Կը Պահանջէ Ալեքսանոր Սարգսեանէն Եւ Աղուան Յովսէփեանէն Բռնագանձել Անշարժ Գոյքեր Եւ Գումարներ



Ալեքսանոր Սարգսեան

Գլխաւոր դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը պահանջ ներկայացուցած է դատարանին՝ ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Ալեքսանոր Սարգսեանէն եւ անոր փոխկապակցուած անձերէ յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձել:

14 անշարժ գոյք, 8 շարժական գոյք, 5 իրաւաբանական անձանցում մասնակցութիւն եւ 5 միլիոն 92 միլիոն դրամ:

Հակափտածութեան դատարանը 2024 թուականի Սեպտեմբեր 27-ին վարույթ ընդունած է Գլխաւոր դատախազութեան՝ ապօրինի ծագում



Աղուան Յովսէփեան

ունեցող գոյքի բռնագանձման վերաբերեալ հերթական հայցադիմումը. տեղեկացուցած են ՀՀ Գլխաւոր դատախազութեան:

Գլխաւոր դատախազութեան նաեւ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը պահանջած է ՀՀ նախկին գլխաւոր դատախազ, ՀՀ Քննչական կոմիտէի նախկին նախագահ Աղուան Յովսէփեանէն եւ անոր փոխկապակցուած անձերէ յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձել:

29 անշարժ գոյք, 8 իրաւաբանական անձերու մէջ մասնակցութիւն եւ 2 միլիոն 551 միլիոն 100 հազար դրամ:

Հարցուածներուն Մեծ Մասը Կը Կարծէ, Որ Հայաստանի Մէջ Կայ Խօսքի Ազատութեան Բարձր Մակարդակ

ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալութիւնը հրապարակած է Հայաստանի մէջ խօսքի ազատութեան եւ լրատուութեան սպառման ամէնամեայ հետազոտութեան արդիւնքները:

Կը նշուի, որ ինչպէս 2023 թուականին, 2024 թուականին նոյնպէս հարցուածներուն մեծամասնութիւնը կը կարծէ, որ Հայաստանի մէջ կայ խօսքի ազատութեան բարձր մակարդակ ինչպէս հասարակութեան, այնպէս ալ լրատուամիջոցներուն համար: Հարցուածներուն 75 տոկոսը մարդոց արտայայտուելու ազատութիւնը կը համարէ լիովին կամ որոշակիօրէն ազատ, լրատուութեան պարագային այդ ցուցանիշը 72 տոկոս է:

2023 թուականի համեմատութեամբ 8 տոկոսով աճած է այն մարդոց թիւը, որոնք այժմ կը կարծեն, որ Հայաստանի մէջ իշխանութիւնները եւ համապատասխան կառույցները համարժէքօրէն կը պաշտպանեն խօսքի ազատութիւնը ինչպէս լրատուամիջոցներու, այնպէս ալ անհատներու շրջանակին մէջ:

Ֆոքուս խումբի մասնակիցներուն մեծամասնութիւնը խօսքի ազատութիւնը կը սահմանէ որպէս սեփական կարծիքը արտայայտելու կարողութիւն՝ առանց հետեւանքներու մասին վախնալու: Հարցման մասնակիցները կը կարծեն, որ Հայաստանի մէջ անհատ-

ներն ու լրագրողները կրնան ազատ արտայայտել իրենց տեսակէտը թէ՛ իշխանութեան, թէ՛ ընդդիմութեան վերաբերեալ՝ առանց վախնալու անկէ բխող հետեւանքներէն:

Անոնք կը նշեն, որ լրագրողները կրնան հրապարակել ապակողմնորոշիչ պատմութիւններ՝ հաւանումներ ստանալու եւ բարձր վարկանիշ ձեռք բերելու համար, ինչ որ կրնայ բացասական հետեւանքներ ունենալ հասարակութեան համար: Այս պահուածքը բացասաբար կը գնահատուի, յատկապէս որ լրագրողներու նման վարքը կը մնայ անպատիժ: Որոշ մասնակիցներ նոյնիսկ կ'առաջարկեն գրաքննութիւն կիրառել՝ լրագրողներուն աշխատանքը կարգաւորելու եւ տարածուող բովանդակութիւնը վերահսկելու համար: Բացի անկէ, մտահոգութիւններ կը հնչեն խօսքի ազատութեան չարաչահման վերաբերեալ, երբ վերաւորական խօսքն ու քաղաքավարութեան պակասը կ'արդարացուին խօսքի ազատութեամբ:

Հարցման մասնակիցները որպէս հաշիակաւ լրատուական տիրույթին մէջ խօսքի ազատութեան ամենաբարձր մակարդակ ունեցող միջոցներ կ'ընկալեն պոլիները, վլոկները եւ փոտքասթերը, նաեւ՝ լրատուական կայքերը՝ համապատասխանաբար 86 տոկոսը եւ 83 տոկոսը գնահատելով զանոնք «լիովին ազատ» եւ «որոշ չափով ազատ»:

ԼՈՒՐԵՐ

Ֆրանքոֆոնի Գագաթաժողովը Համերաշխութիւն Կը Յայտնէ Հայաստանին



Ֆրանքոֆոնի գագաթաժողովին մասնակցող պատուիրակներու խմբանկարը

Ֆրանքոֆոնի 19-րդ գագաթաժողովի շրջանակին մէջ ընդունուած է «Ֆրանքոֆոն տարածաշրջանին մէջ ճգնաժամային իրավիճակներու, անոնց յաղթահարման եւ խաղաղութեան ամրապնդման վերաբերեալ բանաձեւը», որով կազմակերպութեան լիիրաւ անդամ 54 պետութիւններ համերաշխութիւն յայտնած են Հայաստանին եւ խաղաղութեան գործընթացին, հաղորդած է ՀՀ Արտաքին գործերու նախարարութիւնը:

Հաղորդագրութեան համաձայն՝ բանաձեւին մէջ ընդգծուած է Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան գործընթացին մէջ 1991 թուականի Ալմա-ատայի հռչակագրին համահունչ երկու երկիրներու տարածքային ամբողջականութեան նկատմամբ յարգանքը:

Ֆրանքոֆոնի անդամ պետութիւնները ողջունած են 2024 թուականի Ապրիլ 19-ի Արձանագրութեան մէջ վերահաստատուած սկզբունքներու հիման վրայ սահմանազատման գործընթացին մէջ եւ միջպետական սահմանագիծի վերականգնման ուղղութեամբ արձանագրուած յառաջընթացը, ինչպէս նաեւ խրախուսած են տարածաշրջանային հաղորդակցութեան ուղիներու վերաբացումը՝ ինքնիշխանութեան, ազգային իրաւագործութեան, հաւասարութեան ու փոխադարձութեան սկզբունքներու յարգանքի հիման վրայ:

Ընդգծուած է ուժի կիրառման անընդունելիութիւնը եւ կոչ եղած է ձեռնպահ մնալու ռազմատենչ հռետորաբանութենէն եւ ատելութեան խօսքէ, որ կրնայ խոչընդոտել խաղաղութեան գործընթացը:

Բանաձեւը շեշտած է նաեւ Հայաստանի մէջ տեղակայուած Եւրոպական Միութեան քաղաքացիական առաքելութեան (EUMA) կարեւորութիւնը եւ սահմանամերձ տարածքներու մէջ կայունութեան գործին մէջ առաքելութեան ներդրումը:

Բանաձեւին մէջ կարեւորուած է Լեռնային Ղարաբաղէն 115 հազար բռնի տեղահանուած փախստականներուն շարունակական

մարդասիրական աջակցութեան ապահովումը, ռազմագերիներու եւ այլ պահուող անձերու, ինչպէս նաեւ անյայտ կորսուածներու խնդիրներու լուծումը:

ՖՄԿ-ն վերահաստատած է Լեռնային Ղարաբաղի մէջ մշակութային ժառանգութեան ոչնչացման առնչութեամբ մտահոգութիւնը եւ Լեռնային Ղարաբաղ եւ յարակից տարածքներ ԵՈՒՆԵՍԿՕ-ի առաքելութեան իրականացման հարցով անդամ երկիրներու աջակցութիւնը, փոխանցած է Հայաստանի Արտաքին քաղաքականութեան գերատեսչութիւնը:

Գագաթաժողովին Հայաստանէն կը մասնակցէր վարչապետ Նիկոլ Փաշինեանի զխաւորած պատուիրակութիւնը:

Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարած է, թէ «խորապէս ցաւալի է, որ Հայաստանը Ֆրանսայի բացառապէս աջակցութեամբ եւ հովանաւորութեամբ կը չարաչահէ Ֆրանքոֆոնի միջազգային կազմակերպութիւնը»:

Ատրպէյճանը կը պնդէ, թէ Ֆրանսան «կոպտօրէն չարաչահած է կառուցին մէջ իր նախագահութեան կարգավիճակը», իսկ Հայաստանը խաղաղութեան գործընթացին նկատմամբ «անհետաքրքրութիւն» կը դրսեւորէ: Աւելին, Պաքուն կոչ ըրած է Հայաստանին հրաժարելու «սադրիչ քայլերէ» եւ քաղաքական կամք ու պատասխանատուութիւն դրսեւորելու՝ վերացնելու կարգաւորման գործընթացը իր տրամաբանական աւարտին հասցնելու մնացած խոչընդոտները՝ առաջին հերթին փոփոխելով իր Սահմանադրութեան եւ այլ օրէնսդրական դրոյթները, որոնք, ըստ Պաքուի, «տարածքային պահանջներ կը պարունակեն Ատրպէյճանի նկատմամբ»:

«Հայկական կողմը պէտք է ընտրութիւն կատարէ՝ կա՛մ ընթանալ կարգաւորման գործընթացը աւարտին հասցնելու ճանապարհով, կա՛մ շարունակել առճակատումը բոլոր ուղղութիւններով», - ըսուած է ատրպէյճանական ԱԳՆ-ի յայտարարութեան մէջ:

ԵՄ Սուտ Կորակէ ՌԴ ԱԳԾ Ղեկավարին Յայտարարութիւնները Հարաւային Կովկասի Մէջ Արեւմուտքի Նպատակներուն Վերաբերեալ



Եւրոմիութեան Արտաքին քաղաքական Ծառայութեան պաշտօնական ներկայացուցիչ Փիթըր Սթանօ

Եւրոմիութեան Արտաքին քաղաքական Ծառայութեան պաշտօնական ներկայացուցիչ Փիթըր Սթանօն արձագանգած է Ռուսաստանի Անվտանգութեան Դաշնային Ծառայութեան ղեկավար Ալեքսանտր Պորթնիքովի յայտարարութեան, թէ Արեւմուտքը Հայաստանը կը մղէ ձգձգել Պաքուի հետ խաղաղութեան շուրջ բանակցութիւնները եւ մտադիր է զխաւորել հայ-ատրպէյճանական կարգաւորման գործընթացն ու ՆԱԹՕ-ի գորախումբ տեղակայել Հարաւային Կովկասի մէջ:

Պատասխանելով Պորթնիքովի յայտարարութիւններուն վերաբերեալ «Արմենիա»-ի թղթակիցին հարցին՝ Սթանօն նշած է, որ ՌԴ Անվտանգութեան Դաշնային Ծառայութեան ղեկավարի մեկնաբանութիւնները անիմաստ են: «Այս մեկնաբանութիւնները ամբողջութեամբ անիմաստ են, ռուսական վարչակարգին բնորոշ սուտ, որ կը փորձէ քողարկել Հայաստանին տուած խոստումներու եւ անոր նկատմամբ պարտաւորութիւններու կատարման կրկնուող ձախողումները», - յայտնած է Սթանօն:

Ռուսաստանի Անվտանգութեան Դաշնային Ծառայութեան ղեկավար Ալեքսանտր Պորթնիքովը ԱՊՀ երկիրներու անվտանգութեան մարմիններու ղեկավարներու խորհուրդին նշելով. «Մենք ապրում ենք ժողովրդավարութիւնում, ինչը հասկանալիօրէն մեզ մօտեցնում է ԵՄ-ին, այդ թւում՝ հասարակական արժէքերի ծիրին մէջ: Սակայն անվտանգութեան հարցում հայ հասարակութիւնը հոգեբանօրէն կապ-



Ռուսաստանի Անվտանգութեան Դաշնային Ծառայութեան ղեկավար Ալեքսանտր Պորթնիքով

դի նիստին ժամանակ յայտնած է, որ Արեւմուտքը կը փափաքի ՆԱԹՕ-ի գորախումբ տեղակայել Հարաւային Կովկասի մէջ իբր Երեւանի եւ Պաքուի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման օգնելու համար: Ան յայտնած է, որ «ամերիկացիներն ու եւրոպացիները շահագրգռուած չեն Հարաւային Կովկասի մէջ կայունութեան հաստատմամբ»: «Երեւանը մղելով Պաքուի հետ բանակցութիւնները ձգձգելուն՝ Արեւմուտքը կը փորձէ զխաւորել հայ-ատրպէյճանական կարգաւորման գործընթացը եւ հասնիլ տարածաշրջանին մէջ սեփական «խաղաղապահ» գորախումբի տեղակայման՝ տէ իւրէ ՄԱԿ-ի, իսկ տէ ֆաքթօ՝ ՆԱԹՕ-ական»,- յայտնած է Պորթնիքովը:

ՌԴ Անվտանգութեան Դաշնային Ծառայութեան ղեկավարը նաեւ կրկնած է անհիմն մեղադրանքները այն մասին, թէ Հայաստանի մէջ տեղակայուած ԵՄ դիտորդական առաքելութիւնը հետախուզական աշխատանք կ'իրականացնէ ՆԱԹՕ-ի երկրի համար՝ ընդգծելով Ռուսաստանի եւ անոր գործընկերներուն:

Ան նաեւ յայտնած է, որ «Արեւմուտքը կը փափաքի հասնիլ ՀԱՊԿ-էն Հայաստանի դուրս գալուն՝ անոր դիմաց խոստանալով զէնքի արտօնեալ մատակարարումներ եւ անվտանգութեան երաշխիքներ»:

Հայ Հասարակութեան Սօտ Հիասթափութիւն Կայ Ռուսականէն. Արարատ Միրզոյեան

Հայ հասարակութեան մօտ հիասթափութիւն կայ ՌԴ-էն, ռուսական օգնութենէն: Վարչաւայի Անվտանգութեան համաժողովին այս մասին նշած է ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը՝ անդրադառնալով հայ-ռուսական յարաբերութիւններուն: «Գաղտնիք չէ այլեւս, որ հայ հասարակութեան մօտ հիասթափութիւն կայ Ռուսաստանի Դաշնութիւնից, ռուսական օգնութիւնից: Երբ մեր սահմանների վրայ յարձակում եղաւ, ոչ Ռուսաստանը, ոչ ՀԱՊԿ միւս գործընկերները չարձագանգեցին», - ըսած է նախարարը:

Միրզոյեան նաեւ անդրադարձած է ԵՄ հետ յարաբերութիւններուն՝ նշելով. «Մենք ապրում ենք ժողովրդավարութիւնում, ինչը հասկանալիօրէն մեզ մօտեցնում է ԵՄ-ին, այդ թւում՝ հասարակական արժէքերի ծիրին մէջ: Սակայն անվտանգութեան հարցում հայ հասարակութիւնը հոգեբանօրէն կապ-



ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

ուած էր Ռուսաստանի հետ: Այս 2-րդ քաղաքացիական պատերազմում է, եւ այժմ մարդիկ պատճառ չեն տեսնում, թէ ինչո՞ւ ամբողջովին չկապվեն ԵՄ-ի հետ»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՆԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՆԱԹՕ-ի Միջազգային Ռազմական Շտաբի Պետը ՀՀ ՊՆ Վարչական Համալիրին Մեջ Երկկողմ Հանդիպումներ Ունեցած է



ՆԱԹՕ-ի պատուիրակության հանդիպումը ՀՀ Պաշտպանության Նախարարությունն Գերա

Աշխատանքային այցով Հայաստան ժամանած ՆԱԹՕ-ի միջազգային ռազմական շտաբի պետ, գործավար-լեյթենանթ Եստրալ Ատամչյանի գլխավորած պատուիրակությունը Հոկտեմբեր 3-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրին մեջ երկկողմ հանդիպումներ ունեցած է ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, Զինուած Ուժերու գլխավոր շտաբի պետ, գործավար-լեյթենանթ Էստրալ Ատամչյանի ու ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության եւ միջազգային համագործակցության վարչության պետ Լեւոն Ալվազեանի հետ:

Հանդիպումներու ընթացքին քննարկուած է հարցերու լայն շրջանակ, մասնաւորապէս՝ անդրազարկ կատարուած է ՀՀ-ՆԱՏՕ համագործակցութեան ներկայիս ընթացքին, զարգացման հնարաւորութիւններուն: Մասնաւորապէս են համագործակցութեան առաւել նպատակայարմար ուղղութիւնները: Հայկական կողմը ներկայացուած է ՀՀ զինուած ուժերու բարեփոխումներու ընթացքը: Քննարկուած են տարածաշրջանային անվտանգութեան առնչուող հարցեր, եւ կարծիքներ փոխանակուած են միջազգային ռազմաքաղաքական զարգացումներուն վերաբերեալ:

ՊԵԿ-ը Ապահոված է Շուրջ 4.5 Միլիարդ Տոլար Հարկային Եկամուտ



Պետական Եկամուտներու կոմիտէն կը տեղեկացնէ, որ 2024թ. Յունուար-Մեպտեմբեր ամիսներու ընթացքին հարկային մարմիններու կողմէ հաւաքագրուած են շուրջ 1 թրիլիոն 698,6 միլիարդ դրամ (շուրջ 4,5 միլիարդ Տոլար) եկամուտներ, ինչ որ նախորդ տարուայ նոյն ժամանակաշրջանի ցուցանիշէն աւելի է շուրջ 189,1 միլիարդ դրամով կամ 12,5%-ով: Մաքսային մարմիններու կողմէ հաւաքագրուած է շուրջ 312 միլիարդ դրամ եկամուտ, ինչ որ նախորդ տարուայ նոյն ժամանակաշրջանի ցուցանիշէն պակաս է շուրջ 60,8 միլիարդ դրամով կամ 16,3%-ով:

Կոմիտէն կը յայտնէ, որ 2024թ. Յունուար-Մեպտեմբեր ամիսներու ընթացքին հարկային եւ մաքսային մարմիններուն կողմէ ընդհանուր հաւաքագրուած է 2 թրիլիոն 10,6 միլիարդ դրամ, որմէ հարկ վճարողներուն եւ ֆիզիքական անձերուն վերադարձուած է 243,4 միլիարդ դրամ: Այսպիսով, հարկային եկամուտներու եւ պետական տուրքերու փաստացի կատարողականը կազմած է 1 թրիլիոն 767,2 միլիարդ դրամ, ինչ որ նախորդ տարուայ նոյն ժամանակաշրջանի ցուցանիշէն աւելի է 150,2 միլիարդ դրամով կամ 9,3%-ով:

Քանի Մարդ Ծնած է Ու Քանի Մահ Արձանագրուած է Այս Տարուայ 8 Ամիսներուն

2024 թուականի Յունուար-Օգոստոսին Հայաստանի մէջ ծնած է 21 հազար 876 մարդ, մահացած՝ 17 հազար 217 մարդ: ՀՀ վիճակագրական կոմիտէի տուեալներուն համաձայն՝ այս տարուայ 8 ամիսներու արդիւնքներով արձանագրուած է 10 հազար 405 ամուսնութիւն եւ 3041 ամուսնալուծութիւն:

Հայաստան Սկսած է Եւ 84 Միաւոր ATAGS Կայանքներու Գնման Գործընթացը



Հայաստանի զինուած ուժերը աւարտած են վեց միաւոր ATAGS 155 մմ/52 տրամաչափի հրետանային կայանքներու փորձարկումները, որոնք մատակարարուած են Հնդկաստանի կողմէ: Այս մասին յայտնած է Indian Defence Research Wing (IDRW) Wing մասնագիտացուած կայքը: Հետ ATAGS 155 մմ/52 վեց հրետանային համակարգերու խմբաքանակը ծրագրաւորուած է հայերէնով՝ հայկական կողմին պահանջով: «Բացի անկէ, կատարուած են քանի մը այլ փոփոխութիւններ, որպէսզի հրետանային կայանքները յարմարեցուին հայկական զինուած ուժերու պահանջներուն: Չնայած հրետանային համակարգերը ի սկզբանէ փորձարկուած են Հնդկաստանի մէջ՝ անոնք երկար ժամանակ չէին փորձարկուած Հայաստանի պայմաններուն մէջ», - յաւելած է IDRW-ն:

IDRW-ի աղբիւրներուն համաձայն՝ այդ փորձարկումներուն յաջող աւարտը Հայաստանին թոյլ տուած է սկսիլ եւս 84 միաւոր ATAGS հրետանային կայանքներու գնման գործընթացը՝ հնդկական «Kalyani Groups» արտադրողին: «ATAGS հրետանային համակարգերու ձեռքբերումը զգալիօրէն պիտի բարձրացնէ հայկական բանակին հնարաւորութիւնները եւ պիտի ապահովէ անոր հրետանիի կրակային հզօրութեան այդքան անհրաժեշտ աճը: Այս ժամանակակից զէնքերը արժէքաւոր պիտի դառնան երկրի սահմանները պաշտպանելու եւ անոր ազգային անվտանգութիւնը ապահովելու գործին մէջ», - կը նշէ IDRW-ի աղբիւրը:

Հայաստան Կը Յաւակնի Դառնալ Տարածաշրջանային Արհեստագիտական Կարելորագոյն Կեդրոն. Միտթար Հայրապետեան

ՀՀ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Միտթար Հայրապետեան մասնակցած է «Մտքի ուժը. արհեստական բանականութիւնը սահմաններէն աջ կողմ՝ բարոյագիտութեան շրջանակներուն մէջ» խորագրով WCIT2024/DigiTec համաշխարհային համագումարի մամուլի ասուլիսին:



Նախարար Հայրապետեան ելոյթ կ'ունենայ DigiTec համաշխարհային համագումարի ընթացքին

Նախարարը նշած է, որ վերջին հինգ տարուայ ընթացքին Հայաստանը երկրորդ անգամ կը հիւրընկալէ նորարարութիւններու եւ արհեստագիտութիւններու համաշխարհային համագումարը, ինչ որ կու գայ եւս մէկ անգամ ընդգծելու ՀՀ-ի յաւակնութիւնները՝ դառնալու տարածաշրջանային արհեստագիտական կարելորագոյն կեդրոն: Նախարարը շեշտած է, որ միահամուռ ջանքերու շնորհիւ Հայաստանը դարձած է կարելորագոյն կիզակէտ արհեստագիտական քարտէզի վրայ եւ համոզմունք յայտնած, որ այս 3 օրերու ընթացքին հնարաւորութիւն պիտի ստեղծուի բացառապէս արհեստական բանականութեան կողմէ մարդկութեան եւ առհասարակ արհեստագիտական աշխարհին առաջարկուող նոր հնարաւորութիւններն ու գործիքակազմերը, որոնք կու գան փոխելու առհասարակ բոլորս, մեր կեանքն ու մոլորակը: Հայրապետեան ընդգծած է, որ WCIT-ն չափազանց կարելոր

միջազգային հարթակ պիտի ըլլայ նորանոր բացառապէսներու համար եւ բարի երթ մաղթած է համագումարի աշխատանքներուն: Նորարարութիւններու եւ ծառայութիւններու համաշխարհային դաշինքի (WITSA) ղեկավար Շան Սիան իր հերթին նշած է, որ 2019 թուականի համագումարի օրերուն կրկին հաւաքուած էին Երեւանի մէջ, հետեւաբար ունին բազմաթիւ հաճելի յիշողութիւններ: Ան տեղեկացուցած է, որ WITSA-ը 28-րդ անգամ կը կազմակերպէ այս համագումարը:

Քաղաքական Նշմար Պատերազմի ճակատագիրը Ռազմի Դաշտին Վրայ Կ'որոշուի

Սեպտեմբեր 17 էն ի վեր Լիբանան եւ Յրզպալլա կ'ենթարկուին ուժգին յարձակումներու, որ իր զագաթնակետին հասաւ 27 Սեպտեմբերին, երբ իսրայէլեան օդուժը աննախադէպ հարուածով մը սպաննեց Յրզպալլայի ընդհանուր քարտուղար սեյիտ Յասան Նասրալլան եւ իրեն ընկերակցող բարձրաստիճան ղեկավարներ, որոնք հաւաքուած էին Պէյրութի հարաւային արուարձանին մէջ գտնուող ստորգետնեայ ապաստարանը:

Յրզպալլայի դէմ յարձակումները անկիւնադարձային փուլ մը արձանագրեցին, երբ Իսրայէլ կրցաւ անոր անդամներու անձնական հաղորդակցութեան սարքերը համաժամանակ պայթեցնել, եւ շարունակուեցաւ Յրզպալլայի, պաղեստինեան եւ այլ իսլամական դիմադրութեան բարձրաստիճան ղեկավարներուն հասցուած մահացու հարուածներով:

Իսրայէլի հասցուած աննախադէպ հարուածներէն յետոյ կ'ակնկալուէր, որ Իրան խիստ լուրջ հարուած մը հասցնէ Իսրայէլին: Ընդհակարակը, Իրանի կողմէ Իսրայէլի դէմ ուղղուած վրէժխնդրութեան ոճը, խօսոյթը եւ հռետորաբանութիւնը զուսպ էր:

Վերադառնալով դէպքերու ժապաւենին, կը նկատենք, որ վերջերս Նիւ Եորքի մէջ կայացած ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին Իրանի նախագահ Մասուտ Փեգեշքիանի յայտարարութիւններուն մէջ արմատական դիրքորոշումները մեղմացնելու ջանասէր փորձեր կային:

Ըստ Bloomberg կայքի, Փեգեշքիան ամերիկացի լրագրողներու հետ հանդիպումի մը ժամանակ նշած է, որ Իրանը կրնայ քննարկել զէնքէն հրաժարելու օրակարգը «եթէ Իսրայէլը հրաժարի իր ունեցած զէնքէն», այն ինչ դէտերը նկատած են որպէս անսովոր յայտարարութիւն:

Յամենայնդէպս, Յրզպալլայի ընդհանուր քարտուղար սեյիտ Յասան Նասրալլայի եւ ընկերներուն սպանութենէն ետք պատերազմը ստացաւ այլ տեսք եւ մտաւ նոր փուլ:

Իսրայէլ աւելի խստացուց օդային ռմբակոծումները, ծանր հարուածներ հասցնելով Լիբանանի ամբողջ տարածքին գտնուող Յրզպալլայի թիրախներուն:

Մինչեւ երեքշաբթի, 1 Հոկտեմբեր 2024, կար այն տպաւորութիւնը, որ Իրանի իշխանութիւնները լքած են Յրզպալլան եւ այսպիսով «դիւրացուցած» են բարձրաստիճան հրամանատարներու սպանութիւնները: Սակայն երեքշաբթի օրուայ Իրանի «չափաւոր» օդային հակահարուածը եկաւ փրկելու անոր խախտուած հեղինակութիւնը, որպէս Դիմադրութեան առաջնային անդամի եւ զլիսաւոր հովանաւոր: Սակայն յստակ է, որ:

1- Իրանի մէջ լուրջ տառակարծութիւն, կայ արմատականներու եւ բարեփոխականներու միջեւ, շարունակելու Դիմադրութեան առանցքին տրուող միլիտարներ տոլարներ արժող բազմատեսակ աջակցութիւնները, մանաւանդ ներկայ պահին, երբ Իրան կ'անցնի շատ ծանր տնտեսական ճգնաժամէ եւ կարիք ունի բացուելու աշխարհին: Բացի տնտեսական ճնշումներէն, լուրջ ճեղք կայ Իրանի հասարակութեան ժամանակակից մտածողութեան եւ պահպանողական կրօնական դասին միջեւ:

Առ այժմ այս անհասկացողութիւնները կը մնան քուլիսներու ետին:

2- Լիբանանի ներքին քաղաքական իրավիճակը ուղղակի կ'ազդուի Իրանի մէջ տեղի ունեցող զարգացումներէն: Սեծասանք անկէ կախուած են Յրզպալլայի նոր ընդհանուր քարտուղարի մը ընտրութիւնը, ռազմաճակատի վրայ Յրզպալլայի դիմադրական գործողութիւններն ու յաջողութիւնները, ապա երկարաժամկետ զարգացումներէն առաջանալիք պատերազմի ելքը:

3- Այսօր Լիբանանի տարածքին վրայ ապրող բնակչութիւնը բաժնուած է երեք մասերու:

ա.- Դիմադրութեան կողմնակիցները, որոնց հիմնական մասը շիա համայնքին կը պատկանին եւ կը կազմեն Դիմադրութեան մարտիկներու ջախջախիչ մեծամասնութիւնը, չըսելու համար բոլորը: Շիա համայնքին մեծ մասը՝ աւելի քան մէկուկէս միլիոն մարդ, այսօր Լիբանանի տարբեր շրջաններուն մէջ գաղթական դարձած են եւ կ'ապրին իրենց տուններէն դուրս անմխիթար պայմաններու մէջ:

բ.- Սիւննի եւ քրիստոնեայ համայնքներուն մեծամասնութիւնը դէմ են այս պատերազմին մէջ ներքաշուելուն, եւ կառչած՝ ՄԱԿի Անվտանգութեան խորհուրդի 1701 բանաձեւի գործադրութենէն, որ Յրզպալլային կը պարտադրէ հարաւային Լիբանանի միջազգային սահմանէն հեռացումը: Այսուհանդերձ, լիբանանցիները իրար մէջ համերաշխ են եւ իրար վտանգ չեն սպառնար:

գ.- Ամենավտանգաւորը սուրիացի գաղթականներն են, որոնց թիւը Լիբանանի մէջ կը գերազանցէ մէկ միլիոնը: Ասոնց ջախջախիչ մեծամասնութիւնը սիւննի համայնքի հետեւորդներ է, եւ շատերը Յրզպալլան պատասխանատու կը գտնեն իրենց երկրի քանդումին եւ իրենց ճակատագրին համար եւ որոշ հակակրանք ունին Յրզպալլայի հանդէպ:

Վերջապէս Պատերազմի աւարտը մօտալուտ չի երեւիր. Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու որոշած է Իսրայէլի հիւսիսի բնակիչներուն անվտանգութիւնը եւ անոնց տունդարձը ապահովել, ցամաքային սահմանափակ գործողութեամբ մը, սակայն 2 Հոկտեմբերին՝ Լիբանանի հարաւ ներխուժելու անոր առաջին փորձը շունդալից ձախողութեամբ աւարտեցաւ:

Նեթանիահու չէ հասկցած, որ անհնար է իր հողին ու հաւատքին կառչած Յրզպալլան արմատախիլ ընել ռազմի դաշտին վրայ, օդային հարուածներով կամ հեռահար հարուածներով, կարելի է միայն սպաննել ու քանդել, բայց յաղթանակը ռազմադաշտին վրայ կ'որոշուի:

ՍԱՍՈՒԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ

Երբ Անհաւասար Են Ուժերը



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Աշխարհ կը դիտէ եւ անյաջող հեւքով կը պահանջէ զինադադար, մինչ Իսրայէլ իր հօր դաշնակից Ամերիկային յենած՝ անդադար կը հարուածէ Լիբանանն ու Կազան:

Դժբախտաբար զօրաւորին դէմ ապարդիւն են մարդկային արդարութեան կանչերը:

Ճիշդ է էմմանուէլ Քանթ փիլիսոփային խօսքը, թէ արդարութիւնը կը ստացուի ուժով:

Եւ տկարները այս աշխարհի՝ շարունակ պիտի տառապին զօրաւորին հարուածներէն:

Ի՞նչ դաս կայ քաղցիւք հայերու համար՝ դիտելով այս մարդկային ողբալի վիճակը:

Եթէ բաղդատական մը ուզենք ընել հոս, նոյնը չէ՞ արդեօք Ազերիին ուժի ցուցադրութիւնը՝ յենած իր հօր դաշնակից Թուրքիոյ:

Եւ տակաւին մեր մէջ կան մարդիկ, որոնք չնկատելով ուժերու անհաւասարութիւնը, որ կայ մեր թշնամիին հետ, առիթը երբեք չեն փախցնէր քննադատելու վարչապետ Փաշինեանի իշխանութիւնը, որ ամէն գնով կը փորձէ խաղաղութիւն կնքել:

Հայաստանի մէջ իշխանափոխութիւն պահանջողները, իբր թէ «հայրենասիրութեան բարձր ամպիտի վրայ կանգնած», ներկայ իշխանութիւնը կը մեղադրեն թուրք եւ ազերի ուժերու դէմ չդնելուն, պատերազմ կորսնցնելուն, հայրենի հողեր զիջելուն եւ Արցախի դժբախտ կորուստը դիւրացուցած ըլլալուն համար:

Մեծխօսիկ մունետիկները նախկին իշխանականներուն, իրենց կուսակցական, եկեղեցական եւ լրագրական հանգամանքներով, ի՞նչ տեսակ քաջագործութեամբ պիտի փորձեն կամ փորձէին ընել արդեօք այն, ինչ որ չկրցաւ կամ չի կրնար ընել ներկայ իշխանութիւնը՝ անհաւասար ուժերու դրութեամբ:

Արդեօք պաղեստինեան Համասի կամ լիբանանեան Յրզպալլայի անխոհեմ արկածախնդրութիւններուն նման քայլեր առնելով հիմնադասակ կործանումի պիտի ենթարկէին կամ ենթարկեն Հայաստանը եւ տեղահան դարձնեն հայրենի ժողովուրդը:

Արդեօք պաղեստինեան Համասի կամ լիբանանեան Յրզպալլայի անխոհեմ արկածախնդրութիւններուն նման քայլեր առնելով հիմնադասակ կործանումի պիտի ենթարկէին կամ ենթարկեն Հայաստանը եւ տեղահան դարձնեն հայրենի ժողովուրդը:

Արդեօք Ռուսիոյ յենած պիտի ընէին կամ ընեն իրենց քաջագործութիւնները, որուն թիկունքի թուութիւնն ու անվստահելի դաշնակից ըլլալը քանիցս փաստուեցաւ:

Ի՞նչ անհեռատես արարք էր Համասի կողմէ կատարուած յարձակումը տարի մը առաջ Իսրայէլի դէմ, եւ անկէ ետք Յրզպալլայի

անիմաստ եւ անտեղի որոշումը անոր թիկունք կանգնելու, երբ նկատի չառնելով հօր կարելիութիւնները Իսրայէլի եւ անոր կուրօրէն աջակցող Ամերիկայի՝ պատճառ դարձան, որ անհաւասար ուժերով կռուի ելլեն եւ մահ ու աւեր բերեն իրենց հետեւորդներուն եւ ժողովուրդներուն:

Յրզպալլայի նահատակ ղեկավար Հասան Նասրալլան, մօտ երեք հազար իր հետեւորդներուն փէյ-ճըրներու (pagers) պայթումներով անկարող (disabled) դառնալէ ետք, խօսք առաւ ըսելու, որ Իսրայէլ թէեւ իր արդիական յառաջացած գիտական կամ զինուորական մակարդակով աւելի զօրաւոր է շրջապալլային, սակայն կամքն ու նահատակութեան ոգին Յրզպալլայի մարտիկին մօտ գերադաս է թշնամիին կարողութիւններէն: «Գնա՛ մեռիր, եկո՛ւր սիրեմ» ի հոգեբանութիւն:

Արդեօք հայ զինուորի զոհողութեան ոգին եւ անոր մարտիրոսացումի կամքին վստահելով է, որ մեծխօսիկ «հայրենասէրները» պիտի ուզէին մահ ու աւեր բերել մեր հայրենի ժողովուրդի գլխուն՝ անհաւասար ուժերով մինչեւ մահ կռուիլ քարոզելով:

Ու եթէ այդ կը պահանջէր հայրենասիրութիւնը, ինչո՞ւ մեծխօսիկ մունետիկները նախկիններուն առանց որեւէ դիմադրութեան լքեցին Արցախը եւ փախան ու ապաստանեցան Հայաստան, ուր գիրենք գրկաբաց ընդունեց ներկայ իշխանութիւնը:

Հայրենի ժողովուրդի կեանքի բարօրութեան եւ ապահովութեան գուրգուրացող Հայաստանի վարչապետը վերջերս ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը. «Այն որ Ազրբեյջանը նոր թեմաներ է բերում դաշտ, նշանակում է, որ այնքան էլ հակուած չէ խաղաղութեան պայմանագրի ստորագրել: Եւ մեր քաղաքական խնդիրն է փոխել ընդհանուր միջավայրն ու միջնորդութեամբ ստորագրութեան պայմանագրի ստորագրումը դառնայ իրատեսական: Անկախ նրանից, թէ ինչ է ասում կամ չի ասում Ազրբեյջանը, Հայաստանը իր ռազմավարութիւնը չպէտք է փոխի, այլ՝ պէտք է հետեւողականօրէն աշխատի խաղաղութեան պայմանագրի ուղղութեամբ»:

Նման յայտարարութիւն ցուց կու տայ ոչ թէ տկարութիւն, ինչպէս պիտի ուզէին մեզ համոզել մեծխօսիկ «հայրենասէրները», այլ հասուն եւ իրապաշտ քաղաքական

Միքայել Մինասեանի Համակարգչի Ֆայլերը՝ Իրաւապահների Ձեռքում



ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Միվիլնեթի տեղեկութիւններով՝ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի դստեր ամուսին Միքայել Մինասեանին առնչուող քրէական գործընթացներում շրջադարձային փոփոխութիւններ են արձանագրուել, երբ իրաւապահների ձեռքում է յայտնուել Մինասեանին պատկանող մի համակարգիչ:

Օգոստոսի 13-ին յայտնի դարձաւ, որ Սերժ Սարգսեանի փեսայ, վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասեանի նկատմամբ նոր քրէական հետապնդում է յարուցուել: Նրան մեղադրում են ձեռնարկատիրական գործունէութեանն ապօրինի մասնակցելու, առանձնապէս խոշոր չափերով գոյքի յափշտակութեան, հարկեր չվճարելու, փողերի լուսցման համար: Դատախազութեան կողմից նոր քրէական հետապնդման յարուցումը խախտում էր շուրջ երեք տարի Մինասեանի ու իրաւապահների միջեւ ենթադրեալ լուռ համաձայնութիւնը: Մինասեանը, որ մինչեւ 2021-ի Յունիս ներքաղաքական կեանքի ակտիւ մասնակից էր, արտահերթ ընտրութիւններից չետոյ հրապարակային յայտարարութիւններով հանդէս էլք գալիս, նրա հետ կապուող «Քառեակ մեղիան» էլ դադարեցրեց գործունէութիւնը 2022-ի սկզբին: Փոխարէնը նրա հետ կապուած քրէական գործընթացների հական առաջընթաց չկար, իսկ 2022-ի Սեպտեմբերին յայտնի դարձաւ, որ Մինասեանի նկատմամբ միջազգային հետախուզումը դադարեցուել է:

Միքայել Մինասեանի համակարգչի բարդ գննութեան, դրանում պահուող ֆայլերի վերականգնման արդիւնքում է, որ քննիչներին հասանելի է դարձել համակարգչի ողջ պարունակութիւնը: Մեր տեղեկութիւններով՝ այդ համակարգիչը Մինասեանին եւ/կամ նրա գործերին է ծառայել 2009-2014 թուականներին (այս ժամանակահատուածում Մինասեանը նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ էր, ապա Սուրբ Աթոռում ՀՀ դեսպանը): Վերականգնուած ֆայլերում տեղեկութիւններ կան պանքային փոխանցումների, էլեկտրոնային նամակագրութիւնների, պաշտօնեաների, քաղաքական գործիչների եւ լրատուամիջոցների ցանկերի վերաբերեալ, որոնց ֆինանսաւորել է Մինասեանը:

Հայաստանում ու արտերկրում ընկերութիւնների նրա հիմնադրած պիզնեսների, տարբեր ընկերութիւնների առքուվաճառքի պայմանագրերի, հարկային փաստաթղթերի մասին բազմա-

թիւ տեղեկութիւններ եւս յայտնուել են քննիչների մօտ: Թէպէտ Քննչական կոմիտէն Մինասեանին առնչուող գործում որպէս նրա կողմից ֆինանսաւորուած լրատուամիջոցներ մատնանշել է «Շանթ», «Արմէնիա», «Արմ-նիուզ», ATV հեռուստաընկերութիւնները, News.am, Tert.am կայքերը՝ մեր տեղեկութիւններով՝ Մինասեանի ֆինանսաւորած լրատուամիջոցների եւ դրանց ղեկավարների ցանկն աւելի մեծ է: Առհասարակ, Մինասեանի ֆինանսաւորած անձանց շրջանակը չի սահմանափակուել բացառապէս նախկին պաշտօնեաներով. տուեալներ կան նաեւ գործող պաշտօնատար անձանց, իշխանութեան ներկայացուցիչների եւ իշխանամերձ քաղաքական գործիչների ու մետիաների մասին:

Քրէական վարոյթի դատախազը նշել էր՝ Մինասեանը վատահելի մարդկանց միջոցով մասնակցել է ձեռնարկատիրական գործունէութեան՝ «Ջագգլֆ», «Պրեսս ստենդ», «Արմէնիա Թիւի», «Զի առ ի փի սի օ», «Սպայկա», «Տելեմեդիակոնտրոլ», «Զորագէտ հիդրոյ», «Թաթսթոուն», «Կապուեկօ», «Իդրամ», «Ալմոսֆեր Արմէնիայ», Metstream DMCC Limited, «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Շուքոմ», «Երեւան մոլ» ընկերութիւններում: Համակարգչում յայտնաբերուած որոշ փաստաթղթեր, նամակագրութիւններ ցոյց են տալիս, որ Մինասեանը բազմաթիւ դէպքերում մասնակցել է այս եւ այլ ընկերութիւնների կառավարմանը, ռազմավարական որոշումների կայացմանը եւ այլն:

Յայտնի է, որ Մինասեանի նկատմամբ յարուցուած նոր քրէական հետապնդման շրջանակում կալանաւորուել են «Երեւան մոլ» առեւտրաժամանցային համալիրի տնօրէն Վազրիկ Սեկոյեանը, Միքայել Մինասեանի մտերիմներից նրա որոշ պիզնեսների կառավարիչ Տիգրան Եղոյեանը, ինչպէս նաեւ «Ռատիոկոնտրոլ» ընկերութեան տնօրէն Մհեր Վարդանեանը (փոխվարչապետ Մհեր Գրիգորեանի կնոջ քրոջ ամուսինը):

Այս գործով կալանաւորուել, ապա խափանման միջոցի փոփոխութեամբ ազատ է արձակուել «Ռոսնեֆտ Արմէնիա» ընկերութեան նախկին տնօրէն Արթուր Ալաւերդեանը: «Ռոսնեֆտ Արմէնիան» ռուսական «Ռոսնեֆտի» դուստրն է, պենզինի շուկայում ըստ էութեան նրա միջոցով միջնորդաւորուած իրականացում էր պենզինի ձեռքբերումը, վառելիքի շուկայի խաղաղոյնները հենց այս ընկերութիւնից էին ձեռք բերում բենզինը: «Ռոսնեֆտ Ար-

մէնա»-ի բաժնետէրը Լիւքսեմպուրկում գրանցուած Rosneft Techno S.A ընկերութիւնն էր, որի սեփականատէրերի ցանկում էին Արթուր Ալաւերդեանն ու Լէոնիդ Արեւշատեանը: Վերջինս Մինասեանի մտերիմներից է, նրա պիզնեսների կառավարիչներից, նախկին դեսպանին առնչուող գործերով էլ մեղադրեալ է ու հետախուզում է Հայաստանի իրաւապահների կողմից:

Միքայել Մինասեանին առնչուող գործով հետախուզում է յայտարարուել նաեւ նրա մտերիմներից Արմէն Պետրոսեանի նկատմամբ: Պետրոսեանը մի շարք ընկերութիւններում ձեւակերպուած է որպէս բաժնետէր եւ տնօրէն, օրինակ՝ Opera Suite հիւրանոցում, «Ջագգլֆ» սրճարանների ցանցում:

Սեպտեմբերի 20-ին յայտնի դարձաւ, որ Քննչական կոմիտէն ձեռքաւարել է Միւնխի նախկին մարզպետ, «Հայաստան» դաշինքի նախկին պատգամաւոր Վահէ Յակոբեանի եղբօրը՝ Կարէն Յակոբեանին: Վերջինս «Մաքուր երկաթի գործարան» ընկերութեան տնօրէնն է, իսկ այս ընկերութիւնը նախկինում բաժնեմաս ունէր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Յակոբեանը եւ ԶՊՄԿ-ի տնօրէնի նախկին տեղակալ Նա-

եթէ նրանց տրամադրութեան տակ չլինէր համակարգչից յայտնաբերուած որոշ փաստաթղթեր, պանքային ու դրամական միջոցների շարժերն ու դրանց հետքերը:

Palazzo Castri 1874-ը գտնուում է Ֆլորենցիայի սրտում: Զորաստանի հիւրանոցն ունի 1 000 քմ մակերեսով այգի, 60 սենեակ: Բացառելի կարելի է տեսնել, որ հիւրանոցը վերակառուցուել է իտալական «ռենիօ» ընկերութեան կողմից ու բացուել 2015-ին: Իտալական այս ընկերութիւնն ու Մինասեանը խաչուում են նաեւ Երեւանի կեդրոնում գործող Double Tree by Hilton հիւրանոցի բաժնետիրական շղթայում: Որպէս հիւրանոցի սեփականատէր է ձեւակերպուած եղել կալանքի տակ գտնուող Տիգրան Եղոյեանը, իսկ հիւրանոցի միւս բաժնետէրն է իտալական Renco Valore S.P.A բաժնետիրական ընկերութիւնը:

Քննչական կոմիտէի նախագահի խորհրդական Գոռ Աբրահամեանը, անդրադառնալով Միքայել Մինասեանի հետ կապուող համակարգչի գննութեամբ փաստաթղթերի ի յայտ գալուն, ասաց՝ դա նախաքննական գաղտնիք է, մեկնաբանութիւններ չեն լինելու: Մինասեանի շահերի պաշտպան Ամրամ Մակինեանը չպատասխանեց մեր հեռախօսազանգերին:



Palazzo Castri 1874 հիւրանոցը Ֆլորենցիայում

րեկ Ամբարեանը, մեր տեղեկութիւններով, մեղադրեալ են մի գործով, որի ակունքները եւս Մինասեանի հետ կապուած քրէական վարոյթում են: Այլ կերպ ասած, դէպի «Մաքուր երկաթի գործարան» սլաքներն ուղղուել են Մինասեանին առնչուող քրէական վարոյթի քննութեան արդիւնքում: Յակոբեանին ու Ամբարեանին առնչուող քրէական վարոյթը վերաբերում է հարկեր չվճարելուն. Յակոբեանը կալանաւորուել է երկու, Ամբարեանը՝ մէկ ամսով:

Հիւրանոց Ֆլորենցիայիում
Հայաստանի իրաւապահները դժուար թէ կարողանային յայտնաբերել Միքայել Մինասեանի հետ ենթադրեալ կապուած Palazzo Castri 1874 հիւրանոցը Ֆլորենցիայում,

Մինասեանի համակարգչում եղած փաստաթղթերը չեն կարող դիտարկուել զուտ որպէս Մինասեանի տնտեսական գործունէութեան ու բարգաւաճման ապացոյցներ: Փաստաթղթերի այդ պաշարը ցոյց է տալիս Մինասեանի քաղաքական ազդեցութիւնը տարբեր խմբերի, քաղաքական գործիչների, պետական պաշտօնեաների, լրատուամիջոցների վրայ: Չի բացառուում, որ Հայաստանի իշխանութիւնները դրանք կ'օգտագործեն 2026-ի խորհրդարանական ընտրութիւններից առաջ: Մեծ է հաւանականութիւնը, որ տուեալների արտահոսքը կը լինի խտրական՝ խնայելով իշխանամերձ որոշ գործիչների ու մետիաների:

«ՄԻՎԻԼՆԵԹ»

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Հայ Ամերիկեան Թանգարանի Առաջին Փառատօնը Նշուեցաւ Մեծ Յաջողութեամբ



Անցնող կիրակի, Հոկտեմբեր 6, 2024, կէսօրուան ժամը 1:00-6:00, կլենտէյլի Հանրային կեդրոնական գրադարանի մերձակայ հողատարածքին վրայ տեղի ունեցաւ Հայ-Ամերիկեան Թանգարանի եւ մշակութային կեդրոնի առաջին փառատօնը, որուն նպատակն էր տօնել Թանգարանի այժմու շինարարութեան գործընթացը:

Մթնոլորտը տօնական էր եւ զարնանային: Այս առիթով զբօսաՎայրի շրջակայ բոլոր փողոցներն ալ ներգրաւուած էին փառատօնի միջոցառումներով: Հոն էր շրջակայ բնակավայրերէն ժամանած տարբեր տարիքի հազարաւոր հայեր: Տարեցներու համար տրամադրուած էին աթոռներ եւ սեղաններ: Իսկ երախաներուն համար կային ժամանցի եւ գուարձալիքի տեսակաւոր յարմարութիւններ:

Ձայնասփռուող հաճելի երաժշտական մթնոլորտի ներքեւ ներկաները վայելեցին բարձրորակ համադամ ուտելիքներ:

Զբօսայգիին մէջ զետեղուած յատուկ բեմի կողքին կանգնեցուած էր նաեւ լայնապատու մը, որ անընդհատ տեսաբերիզով կը ներկայացնէր Թանգարանի շինարարութեան պատմական ու ներկայի գործընթացը: Արդարեւ, այս Թանգարանն կարելի է որպէս անցեալին յարգանքի տուրք մատուցանող եւ գալիք սերունդներուն համար ապագայ կերտող իւրաքանչեւ կոթող մը: Այս առիթով նշեցք որ Թանգարանի պաշտօնական բացումը կը նախատեսուի 2026-ին:

Փառատօնի յայտագրի ընթացքին ողջոյնի խօսքերով ելոյթներ ունեցան հոյլ մը անձնաւորութիւններ եւ պատասխանատուներ:

Նախագահ Վլատիմիր Փուլին Քրեմլինի մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպումէն յետոյ լրագրողներուն յայտնած է, որ ՀՀ վարչապետին հետ «ուղղակի դէմ առ դէմ քննարկած են ընթացիկ հարցերը»:

Պուճախի հասանք: Այդ օրը Համբան մէջերնէս փախաւ: Մինչեւ հոն Համբան ինը ամիս շատ լաւ աշխատեցաւ մեր հետը: Ասկէ ալ ճամբայ ելանք ու հասանք Թլան: Երեք օր Թլանը պատերազմի բռնուեցանք: Մեզմէ տասը-տասնը հինգ հոգի մեռան, բայց թուրքերէն հարիւրաւոր մեռան: Հոն Արամ Չավուշը թուրք տղայ մը բռնեց: Տղան ըսաւ, որ զիս մի մեռցնէր, ձեզի ողջ առողջ ձիհանը կը տանիմ: Արամ Չավուշն ալ չի մեռցուց:

Միասին ճամբայ ելանք: Մեզի աղտոտ ճահիճի մը մէջը խոթեց մինչեւ ծունկերնիս: Թերեւս մէկ ժամ գացինք այդ ջուրին մէջէն ու երբ ցամաքը մօտեցանք, որ պիտի ելլէնք, ջուրը աւելի խորունկ էր: Իրարու օգնելով կամաց կամաց ճահիճէն ելանք: Ելլողը բաւական հեռու գիրար կը սպասէինք: Իմ ելլելէն յետոյ, Թօսուն Աբրահամը (4) եւ ես ջուրին եզերքը կեցանք ու մնացած ժողովուրդին օգնեցինք, մեկիկ մեկիկ դուրս հանեցինք: Միայն երկու վիրաւորներ ձիուն վրայ մնացէր էին: Ասոնք ալ որ հանէինք, պիտի վերջանար: Այդ ժամանակ Թօսուն Աբրահամին տղան՝ Մինասը եկաւ ու ըսաւ. «Հայրիկ, ժողովուրդը քալեց դուն հիմա հոս կը մնաս, շուտ եկուր»: Ըսաւ ու վերադարձաւ: Թօսուն Աբրահամը ականջ չտուաւ: Ես մէկէն անդրադարձայ եւ տղուն ետեւէն երթալով անոնց միացայ: Եթէ այդ պզտիկը չգար, ես ալ Թօսուն Աբրահամին հետ հոն պիտի մնայի: Մինասը հիմա Ամերիկա կը գտնուի, կրնաք իրեն հարցնել: Նոյն իրիկունը ժողովուրդին հետ ձիհանը հասանք ու ազատեցանք:

-
- 1- Սարգիս ճեպեճեան, Զօրավար Անդրանիկի նախկին սպաներէն: Հաճոյն Ինքնապաշտպանութեան Կոմիտէի Զինուորական Գերագոյն Սարմնի ընդհանուր իրաւմաստար:
- 2- Զանիէլ Չավուշ Թորոսեան, Հաճոյն Ինքնապաշտպանութեան Կոմիտէի կամաւորական Բխումբի իրաւմաստար
- 3- Արամ Չավուշ Թերզեան
- 4- Աբրահամ Թօսունեան



Կազմակերպութեամբ
«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ԾՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ

Դոկտ. Աբէլ Քինյ. Մանուկեանի

THE ORIGINS OF THE HENCHAKIAN PARTY IN GENEVA AND THE LEGACY OF THE TWENTY GALLOWS

եւ

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԴՈՐՈՒՄԸ ԵՒ ՔՍԱՆ ԿԱՆԱԴԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԵՒ ՌՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՈՒ ԴԻԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

հատորներուն

Գիրքերը կը ներկայացնէ
Իրաւաբան Ռուբէն Աւշարեան

✱ Գեղարուեստական յայտագիր ✱

Հինգշաբթի, 7 Նոյեմբեր 2024, երեկոյեան ժամը 7:30-ին,
ՀԿԲՄ-ի կեդրոնին մէջ, 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

BOOK LAUNCH
Thursday, November 7, 2024 at 7:30 pm, at A.E.B.U. Center, 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104



Թանկագին Ողբ. Յովսէփ Ասատրեանի Ծննդեան 100-Ամեակը

ԽԱՉԻԿ ԾԱՆՈՅԵԱՆ

Օգոստոս 15, 2023-ին լրացաւ հայ մարզաշխարհի լուսաշող աստղերէն, մեծանուն ֆուլթոլիստ եւ մարզիչ, Հայաստանի, Սուրբիոյ, Լիբանանի եւ Աֆղանիստանի անուանի խումբերու մարզիչ, Երեւանի եւ Գապուլի (Աֆղանիստանի) համալսարաններու ֆիզկուլտուրայի դասախօս, հրապարակագիր մտաւորական, հմայող հրապարակախօս եւ ութը լեզու տիրապետող, այս բոլորէն վեր եւ աւելին՝ գլխաւոր մարզ եւ ազնուահոգի անձնաւորութիւն մը՝ ողբ. Ընկ. Յովսէփ Ասատրեանի ծննդեան 100-ամեակը:



« « «

Յովսէփ Ասատրեան ծնած է 1923-ին Արեքսանտրէթ (Իսքենդերուլ): 1944-ին աւարտեց ՀԲԸՄԻՈՒԹեան Կիրարոսի Մեթոդական Վարժարանը, յետագային ուսանած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ, հետեւելով քիմիագիտութեան եւ ըլլալով ծանօթ բարերար՝ ողբ. Արշակ Տիգրանեանի սան: Ասոր համար էր, երբ Լոս Անճելըսի մէջ հիմը դրուեցաւ Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան Վարժարանին, Յովսէփ Ասատրեանի կարգադրութեամբ, Ասատրեան ընտանիքը մեծ գումար մը նուիրեց եւ վարժարանի մայր սրահը Ասատրեան Սրահ կոչուեցաւ:

սին շատ գրուած է եւ տակաւին պիտի շարունակուի գրուել, որքան ատեն որ հայ ժողովուրդը հայրենիքի կամ Սփիւռքի մէջ կը գոյատևէ:

Այսօր մեր թանկագին Յովսէփ Ասատրեանի ծննդեան 100-ամեակին առիթով, մեծագոյն հպարտութեամբ ու երախտիքով պիտի յիշենք այս պատուական հայուն հայրենասիրական եւ ազգասիրական երիտասարդական հրաւառ զգացումները:

Ինչպէս ծանօթ է բոլորին, Երկրորդ Համաշխարհային Պատերազմին, փոքրաթիւ հայ ժողովուրդը Հայաստանի մէջ, 300,000 երիտասարդ զոհ տուաւ: Մեր հայրենաբնակ ժողովուրդը ֆիզիքայէս արիւնաքամ եղաւ: Այդ տարիներուն, Սովետական Միութեան մէջ նոր դասաւորումներ եղան: Այդ տարածքները, որոնք մէկ միլիոնէ պակաս բնակչութիւն ունէին, պիտի կցուէին վերածուէին մեծ պետութեան մը մէջ, որպէս մարզ եւ Հայաստանը այդ վտանգի առաջ էր:

Գրել Յովսէփ Ասատրեանի մարզաշխարհէն ներս իր ունեցած վաստակին ու կեանքին մասին, կը նշանակէ անդրադառնալ Հայաստանի ֆիզկուլտուրայի եւ ֆուլթոլի վերջին 60-80 տարիներու պատմութեան մասին, որոնք նուազագոյնը քանի մը հաստատիւր հաստորներու կարօտ են, եւ վստահօրէն այդ պատմութեան մէջ Յովսէփ Ասատրեանի անունը ոսկետառ բազմաթիւ էջեր գարգարած են: Այդ Յովսէփ Ասատրեանին մասին

Անհրաժեշտ էր հայահաւաք կազմակերպել, փրկելու համար մեր պետականութիւնը եւ հայրենիքը: Հայաստան ներգաղթելու կոչ մը եղաւ հայրենի իշխանաւորներու կողմէ եւ սփիւռքը հայրենասիրական մեծագոյն գիտակցութեամբ եւ ամենայն պատրաստակամութեամբ մօտ 100,000 հայեր սփիւռքէն Հայաստան գաղթեցին փրկելու համար, անգամ մը եւս վտանգի ենթարկուած եւ Խորհրդային Միութեան վերնախաւին մէջ սպրդող հայատեաց ղեկավարներու սաղրանքները ետ կանգնեցնելու համար:

Փրկուած էր հայրենիքը, վտանգազերծուած էին դաւադրութիւնները, հայրենի երկրակամարին վրայ սկսան յայտնուել հայ ժողովուրդի ցայտուն արժանիքները, տաղանդները «ախպար»ը եւ «տեղացին» ազգային հոգեխառնութեամբ մը միացան՝ սկսան կերտել մեր հօրը եւ անպարտ հայրենիքը: Սփիւռքի հայր հայրենիքով աւելի զօրացած, սկսաւ տանիլ ազգայնասիրական իր սուրբ գործը, հայրենիքն ալ իր բազմաթիւ երիտասարդներուն համալսարանական ուսում ջամբեց, մասնագիտութեամբ գինեց եւ մեր ժողովուրդի որակաւորման եւ պահպանման մեծագոյն նպաստեց, մեծ թիւով դասագիրքեր տրամադրեց, հայրենի լեզուի ուսուցչուհիներ պատրաստեց եւ որակաւորեց:

Պատմական անկիւնադարձային նշանակութիւն ունեցող այս շարժման ռահվիրանները հանդիսացան ողբ. Յովսէփ Ասատրեան եւ իր մօտ քսան երիտասարդ գաղափարի ընկերները: Այսպէս, Մարտ 1945-ին Պէյրութի ՀԲԸՄԻՈՒԹեան Զարեհ-Նուպար Ակումբին մէջ, Պէյրութի Ամերիկեան եւ Ֆրանսական համալսարանները յաճախող մօտ քսան երիտասարդներ ժողով մը գումարելով, որոշեցին Հայաստան երթալ: Անոնք Յունիս 15, 1945-ի գարաւանով հայրենիք մեկնեցան, ոմանք առանձին, ուրիշներ ալ իրենց ծնողներուն հետ: անոնք Պէյրութի թերթերուն մէջ կոչ

ըրին ժողովուրդին, որ հետեւին իրենց օրինակին:

Լիբանանի հայութիւնը ընդառաջելով այս երիտասարդներու սրտաշարժ կոչին, մօտ 20 հազար հայեր Լիբանանէն իրենց պապենական յաւերժական հայրենիքը գացին: Անոնք իրենց աչքի առաջ առած էին ամէն տեսակ դժուարութիւններ, գրկանքներ, Սիպիւր եւ այլ սպառնալիքներ կեանքի, բայց փառք ու պատիւ այս հայրենապաշտ մեր թանկագին երիտասարդ սփիւռքի հայերուն, որոնք յաղթահարելով բոլոր դժուարութիւնները, անոնք Հայաստան մեկնեցան, ընտանիք կազմեցին, իրենց կեանքը եւ զաւակներուն ապագան շքեղօրէն կերտեցին:

Անոնք Աստուածատուր իրենց տաղանդներով եւ կարողութիւններով նուաճեցին բազմաթիւ եւ բազմավաստակ բարձրունքներ: Անոնք Հայաստանի եւ համայն հայութեան թագն ու պսակը եւ պարծանքը եղան: Յովսէփ Ասատրեան, Շաքէ Վարսեան, Ստեփան Արաճաճեան, Երուստի Հաւունճեան, Անժէլ եւ Ժանէթ Միւլաճեան, Ե. Խաչատրեան, Գրիգոր Քէշիշեան եւ այլն, բոլորն ալ մեծանուն անձնաւորութիւններ եղան իրենց մասնագիտութեան մէջ:

Ահա այս պատուաբեր եւ փայլուն անունները յիշատակելով ամէն բանէ առաջ խոնարհինք անոնց յիշատակին եւ անունին առջեւ, որոնցմէ մին է թանկագին Յովսէփ Ասատրեանը: Այս անունները, իւրաքանչիւրը, առանց դասագիրքի, առանց շէնքի եւ գրասեղանի ամէն մէկ հայրենասիրութեան պատուաբեր համալսարան մըն է:

Բնաւ կասկած չունինք ըսելու, թէ Յովսէփ Ասատրեանի յիշատակը տարիներ շարունակ յաւերժ պիտի ապրի եւ պատմութեան մէջ, որպէս հայրենասիրութեան ներշնչման վարար աղբիւր եւ անմար կողմնացոյց:

Յիշատակն Յովսէփ Ասատրեանի եւ ընկերներուն օրհնութեամբ եղիցի:

Ամէն Օր Ուրբաթ է...

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Կը պատմուի (մեղքը՝ պատմողին վրայ) թէ հոգեբուժարանի մը. որուն խենթանոց անունն ալ կու տանք. - գլխաւոր պատասխանատու տնօրէն-բժիշկը, յատուկ տեղեկագիր մը պատրաստելու համար, կ'որոշէ մէկ առ մէկ այցելել իր «հիւանդներուն», եւ բոլորին նոյն հարցումը կը հարցնէ: Ու սկսելով իր ծրագրի գործադրութեան, նախ կը մտնէ առաջինին առանձնասենեակը ու կը հարցնէ.

ըսեմ...վաղըըը նորէն Ուրբաթ է...- հաստատօրէն կը պատասխանէ:

Բժիշկը գարմանքով կրկին հարց կու տայ թէ «ինչպէ՞ս կ'ըլլայ վաղը դարձեալ Ուրբաթ է, սխալ ես...» ու կը կրկնէ իր հարցումը:

-Ո՛չ...ո՛չ, պարոն բժիշկ, դո՛ւն սխալ ես... վաղն ալ Ուրբաթ է...միւս օրն ալ Ուրբաթ է...տե՛ս շուրջս, նոյն մարդիկը...նոյն սենեակը...նոյն կերակուրը...նոյն զբօսանքը...նոյն մարզանքը... նոյն գնդակով մեր խաղերը...նոյն պահակները...նոյն դեղերը...եւ դո՛ւն...դո՛ւն ալ նոյնն ես, չես փոխուած... տասը տարիէ ի վեր մեր մեծն ես...առտու կու գաս ճերմակ շապիկով...

Իրիկունը կ'երթաս նոյն «օթոյով»...ամէն բան նոյնն է...կրկնութիւն է...մեզի համար ամէն օր Ուրբաթ է...:

Բժիշկը լսելէ ետք խենթին «արդարացումները», գարմացած եւ քիչ մըն ալ յանկարծակիի եկած, թուղթերը կը հաւաքէ ու դուրս կու գայ սենեակէն, անորոշ բառեր արտասանելով:

Հոս, պատմութիւնը վերջ կը գտնէ...:

Սոյն պատմութիւնը լսելէս ետք, պահանջ զգացի այս մասին անդրադառնալու, որովհետեւ նիւ-

թը իր նպատակով սրտիս շատ մօտ է:

Վերեւ յիշուած խենթին խօսքերը ինծի համար հայելիի մը կը նմանին, որուն մէջէն կրնաս դիտել, տեսնել ծանօթ կամ անծանօթ մարդոց մտքին ու հոգիին ելեւէջները եւ սրտի տրոփումները իրենց մանրամասնութիւններով:

Սակայն չկարծուի, թէ այս տողերը գրուած են, ինչպէս որ առածը կ'ըսէ՝ «խենթը ըսաւ, խելքն ալ հաւատաց»ին հետեւողութեամբ կամ թելադրանքէն մեկնած: Երբեք: Մէջ մը դո՛ւք ալ ձեր շուրջը լաւ դիտեցէ՛ք: Մէջ մը դուք ձեզի հարց տուէ՛ք...: Անկեղծօրէն եւ անաչառ: Գիտակից ուշադրութեամբ եւ դրական սրտով: Չէ՛ք կարծեք թէ արդէն Հայրենիքէն սկսելով մինչեւ սփիւռքներուն յետին տարածքներուն՝ «ամէն օր Ուրբաթ է»:

Անկասկած բացառութիւններ ըլլալու են... բայց...:

«Ամէն օր Ուրբաթ է»։ Ահա տեսակ մը խտացած ճշմարտութիւն: Ու չեմ գիտեր ինչո՞ւ նման բաներ լուրջի չենք առներ: Ինծի համար այս բացատրութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ՝ կեանքի հեզանք: Միտքս առաւել պարզեմ:

Ամէն տեղ սկսած ենք ծամել եւ որոճալ մեզի հրամցուածը: Կարծես գինաթափ կեցած ենք կեանքի

անակնկալներուն առջեւ: Լաւ նայեցէ՛ք...այսօր Կիրակոսն է մեր ղեկավարը...մեր մեծը...մեր ընտրածը...վաղը իր տեղ Մարկոսը կու գայ...իսկ միւս տարի դարձեալ Կիրակոսը կամ անոր խնամին՝ Մարտիրոսը: Մէկը կ'երթայ...միւսը կու գայ: Գուշակ ըլլալու պէտք չկայ: Նման կէտ-հարցերուն մօտենալու համար քաջութիւն պէտք է ունենալ:

Միայն ընդվզումի կամ բողոքի գրիչ մը չեմ ուզեր ըլլալ կամ դառնալ: Կ'ուզեմ որ բոլորս ալ աշակերտենք իրականութեան ճշմարտութեան: Ծանչնանք գիրար եւ մեր շրջապատը:

Արդ, ե՞րբ ազգովին պիտի թեւակոխենք նոր հանգրուան: Ե՞րբ պիտի անդրադառնանք այս իրողութեան եւ զանազաններէ հակառակ, ոչ էականէն, կարեւորը՝ անկարեւորէն: Ինչպէ՞ս պիտի կարենանք վերակազմել եւ վերակազմուիլ: Ուրկէ՞ պէտք է սկսինք: Նայեցէ՛ք Հայրենիքին □ Խնամի, բարեկամ, ծանօթ...իրարու ետեւ շարուած են: Ազուցուած: Նոյնը՝ ամէն տեղ:

Կարծես ամէն օր նոյն ճամբային կը քալենք: Ո՛չ մէկ փոփոխութիւն: Ո՛չ մէկ նորութիւն: Տակաւին չենք գտած մեր գոյութեան ուրիշը: Այս պատճառով, մեզմէ շատեր հայու աղմուկէն քաշուած

Ի Խնդիր Հայ Լեզուին Պահպանման (Մշակույթի Ամսուան Առթիւ)



ՎԵՐ. ՂՈԿՏ. ՎԱՐԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Ներկայիս աշխարհի մէջ մօտաւորապէս 2800 տարբեր լեզուներ կան: Անոնց մէջ հայերէնը ամէնէն հիներէն մէկն է: Անկասկած մեր ազգային գոյութեան հարցին մէջ հիմնական դեր ունեցած է հայ գիրն ու լեզուն: Ո՛չ ոք կրնայ հերքել պատմական այն իրողութիւնը, որ առանց սեփական այբուբենի գոյցէ հայ մշակույթը դժուար թէ կարենար գոյատեւել, քանի որ ազգի մը ինքնութեան գոյաւորման ու պահպանման մէջ բախտորոշ դեր ունի լեզուն:

Նորութիւն մը չէ հաստատել, որ հայ կեանքի մէջ մշակույթը Ս. Մեսրոպով եւ Ս. Թարգմանիչներու փառանքով չ'սկսաւ: Հայ ժողովուրդը 5-րդ դարէն շատ առաջ ունէր բանահիւստութիւն, արուեստ եւ մշակույթ: Հայ գրականութիւնը, սակայն, ինչպէս մեր մշակույթը, գիրերու գիւտով ստացան ազգային դրոշմ ու նկարագիր:

Մեսրոպ Մաշտոցի հայ նշանագիրներու գիւտով մեր լեզուն զարգացաւ եւ բերեցաւ, իր բառերու եւ իմաստներու շքեղ շարադրութեամբ, իր քերականական եւ հնչաբանական անխախտ օրէնքներով եւ ուղղագրութեան յստակ եւ անփոփոխ սկզբունքներով:

Աստուածաշունչ Մատենի թարգմանութեամբ նոր դուներ բացուեցան հայագիր ու հայաստեղծ մշակույթին: Թարգմանուեցան անցեալի եւ ժամանակի յայտնի փիլիսոփաներու եւ աստուածաբաններու գործերը, ինչպէս նաեւ գիտական հատորներ ու բազմաթիւ նոր բաց դպրոցներ իրենց յարկերուն կապեցին ուսման ծարաւ հայ ժողովուրդի գաւակները:

Մեր ոսկեղնիկ լեզուն մեզի տուաւ սքանչելի գրաբարը, որ հինգերորդ դարէն մինչեւ տասնիններորդ դարու կիսուն եղաւ հայ մատենագիրներու եւ հեղինակներու գրական լեզուն:

Ժամանակի ընթացքին, սակայն, հայ ժողովուրդի խօսակցական լեզուն զարգացաւ եւ գրաբարի կողքին կազմեց գիր ու գրականութիւն, որմէ ծնունդ առաւ աշխարհաբարը, իսկ աշխարհաբարը, իր հերթին, ծնունդ տուաւ լեզուական երկու ճիւղերու - արեւելահայ եւ արեւմտահայ գրական եւ խօսակցական լեզուներուն:

Համայն հայութեան համար միշտ այժմէական, միշտ մտալիկ հարցերէն մին եղած է հայ լեզուի պահպանումը: Թէ՛ Հայաստանի մէջ թէ՛ Արտասահմանի մէջ հայ լեզուին սպառնացող վտանգներէն մին

օտար ազդեցութիւններն են, ինչպէս օտար բառերու, լեզուական, ձեւերու եւ ոճերու գործածութիւնը: Պէտք չէ մտահան ընել որ լեզուն կերտուած է ազգի մը բառապաշարին, աւանդութեանց, ասոյթներուն, դարձուածքներուն եւ մտածելակերպին ատղձներով:

Աշխարհի որ անկիւնն ալ գտնուինք, մեր հայրենի հողին վրայ թէ տարաշխարհի մէջ, հայ լեզուն մեր ինքնութիւնը պահող վահանն է, մեր արմատներուն աւելի հասցնող միջոցը, ուր թագնուած են այն բոլոր առանձնայատկութիւնները, որոնցմէ անձ մը կը տարբերի ուրիշ անձէ մը՝ իր զգալու, խորհելու արտայայտուելու եղանակով, աշխարհընկալումով եւ լեզուամտածողութեամբ:

Հայաստանի մէջ սովետական կարգերը բռնաբարեցին մեր գեղեցիկ արեւելահայերէնը, ուղղագրական իր ինքնութեան գրկելով գայն եւ ուսուցիչի բառակազմական շարահիւսական խորթութիւնները պարտադրելով անոր: Որքան փափաքելի պիտի ըլլար, որ մեր նորանկախ հայրենիքի պետութիւնն ու հայ մտաւորականութիւնը, ողջմտութիւնն ու լայնախոհութիւնը ցուցաբերեն մէկդի դնելու արեւելահայերէնի շինծու եւ անհարգատ ուղղագրութիւնը եւ վերականգնելու հայ դասական Մեսրոպեան ուղղագրութիւնը: Իր երկու թեւերով՝ հայրենիքի եւ սփիւռքի մէջ, հայ ժողովուրդը անզանցառելի հրամայական պէտք է համարէ միօրինակ ուղղագրութեան եւ գտարիւն հայերէնի անխախտ պահպանումը:

Երկրի մը բարբառները շատ անգամ կրնան տարբերիլ, բայց լեզուի մը միաձեւ ուղղագրական կանոններու հետեւելու հրամայական պահանջը կարեւոր է ազգի մը միասնութեան գաղափարին:

Ինչ կը վերաբերի Արտերկրի հայութեան, հայերէնի պահպանման հարցը շատ աւելի լուրջ է: Գաղթաշխարհի հայութեան մնայուն մղձաւանջը միշտ եղած է, ու կը մնայ, մայրենի լեզուի տակաւ տժգունումն ու կորուստը:

Իրագեկ ենք այն դառն իրողութեան, որ լեզուի մը գոյատեւման համար անհրաժեշտ են հողն ու հայրենիքը: Առանց հողի ու հայրենիքի լեզուն թաղարի մը մէջ մեծցող ծառի մը կը նմանի, որ կարելիութիւն չունի իր արմատները հողին խրելով կենսաւորուելու: Տարաշխարհի հայութեան համար ա՛յս է հարցը:

Հայ Լեզուին սպառնացող

Գերշո Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան Վատիկանի Մէջ կը Մասնակցի Կաթոլիկ Եպիսկոպոսներու Սինոտին



«Եկեղեցի, որ միասնական է առաքելութեան եւ նորացման ճանապարհին»

Ս. Թ. Հոկտեմբեր 2-ին Վատիկանի մէջ, Ֆրանչիսկոս քահանայապետի նախագահութեամբ բացուեցաւ Եպիսկոպոսներու Սինոտի 16-րդ հերթական ընդհանուր ժողովը, որ պիտի տեւէ մինչեւ Հոկտեմբեր 26:

Այս պատմական ժողովը, որ յայտնի է որպէս «Ժողովականութեան սինոտ», շուրջ 400 մասնակիցներ համախմբած է՝ եպիսկոպոսներ, տարբեր եկեղեցականներ՝ քահանաներ, ինչպէս նաեւ աշխարհականներ, որպէսզի քննարկեն, թէ եկեղեցին ինչպէս կրնայ դառնալ աւելի ներառական եւ մասնակցային իր առաքելութեան եւ կառավարման հարցերու մէջ:

Շեշտադրում ժողովականութեան եւ փոխգործակցութեան վրայ

Սինոտը նպատակ ունի ուսումնասիրել, թէ կաթոլիկ եկեղեցին ինչպէս կրնայ աւելի ամբողջական կերպով մարմնաւորել ժո-

ղովականութեան (սինոտականութեան)՝ «միասին քայլելու» ոգին՝ խթանելով խոր փոխգործակցութիւն բոլոր անդամներու միջեւ: Հռոմի Պապ Ֆրանչիսկոս կարեւորած է եկեղեցականներու կողքին՝ աշխարհականներու եւ լուսանցքային հասարակական խումբերու ձայնը լսելու անհրաժեշտութիւնը: Ան ընդգծած է, որ այս գործընթացի նպատակն է ոչ թէ անհատական օրակարգերը առաջ մղել, այլ՝ համատեղ որոշել, որ Եկեղեցին իր առաքելութեան ընթացքին ինչպէս կրնայ լաւագոյնս ծառայել աշխարհին:

Ըստ Ֆրանչիսկոս քահանայապետի տեսլականին, սինոտալ Եկեղեցուց համար անհրաժեշտ է եպիսկոպոսներու եւ աշխարհականներու միջեւ առաւել մեծ համագործակցութիւն, հիմք ընդունելով Վատիկանի Բ. ժողովի ուսմունքները եւ արձագանգելով ժամանակակից մարտահրաւէրներուն:

Այս սինոտի մէջ աշխարհա-

Շար.ը էջ 19

ՀԻՄՈՒՆՅՈՒՆ ԱՐԽԻԿԱՅԻ ԱՐԽԻՄՏԵԱՆԻ ԹԻՒ

Հովանաւորութեամբ՝

ԹԵՌՈՒ ԲԱԿՏԱՆԻ ԱԿԱԶՄԻԻ

ԳԵՐՉԻ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐ.Ք. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ

Կապակցութեամբ՝

«ԶՈՒԱՐԹՆՈՅ» Մշակութային Վարչութեան

Պատասխանատու Ելքերով՝

21-րդ դարին ՍՓԻՌ-ԲԻ ՄԷՋ ԱՊՐԻԼ ԵՒ ՀԱՅ ԸԱԿԱ

Երկրագոյն՝ Հայերէն/Անգլերէն

TO BE ARMENIAN LIVING IN THE DIASPORA IN THE 21st CENTURY
Armenian/English

Պատասխան՝

ՂՈԿՏ. ՅՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
DIRECTOR OF INSTITUTIONAL INNOVATION OF THE WESTERN DIOCESE

ԳԵՌԱՐՈՒԵԱՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 24, 2024
Երեկոյեան ժամը 7:00-ին
Առաջնորդարանի «ԱՐՄԵՆ ՅԱՐԱՐ» Սրահ
3325 North Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Մուտքը Ազատ
Հիւրասիրութիւն

Նորայր Տատուրեան Տիպար Ուսուցիչը



ԳԵՌՈԳ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

Այսօրուան մեր հարցազրույցով ձեզի կ'ուզեմ ներկայացնել հայերէն լեզուի դասատու մը, որ եզակի է իր տեսակին մէջ: Անոր անունը շատ ծանօթ ըլլալու է ձեզի որովհետեւ դասատու ըլլալու կողքին՝ ան նաեւ նշանաւոր է իր հրապարակային գրութիւններով՝ որոնք կը հրատարակուին «Բառերու Խորհրդաւոր Աշխարհ» խորագրով: Այսպէսով՝ ան կը ներկայացնէ բառերու ստուգաբանութիւնը: Յարզ ներկայացուած բառերն են՝ մեխակ, կասկած, լիճ, աղեղ, կաթ եւ այլն:

Այդ դասատուն ուրիշ մէկը չէ եթէ ոչ՝ նոյն ինքն Նորայր Տատուրեանը: Հիմա տեսնենք թէ ինչն ո՞վ բացառիկ է այս դասատունը:

Գերոգ - Սիրելի Նորայր, կրնա՞ս դու թեզ ծանօթացնել մեր ընթերցողներուն:

Նորայր - Շատ սիրով: Ծնած եմ Պոլիս, նախնական ուսումս ստացած եմ Գարակէօզեան գիշերօթիկ նախակրթարանը, միջնակարգ եւ երկրորդական ուսումս ստացած եմ Վիեննական Միխիթրեան վարժարանը, իսկ բարձրագոյն ուսմանս համար յաճախած եմ Պոսֆորի համալսարանը եւ ստացած Պսակաւոր Արուեստից տիտղոս՝ իմաստասիրութեան ճիւղին մէջ:

Գերոգ - Կուզե՞ս մեզի ծանօթացնել նաեւ ընտանիքդ:

Նորայր - Ինչո՞ւ չէ: 1995-ին, Պոլսոյ մէջ ամուսնացայ Նուէր անունով Պոլսեցի աղջկայ մը հետ եւ բախտաւորութեամբ չորս զաւակներով: Ծովակ, Նարեկ, Տերեւ եւ Արեւ:

Գերոգ - Պատիւս արժանաւորաց: Չորս զաւակներուդ ալ տուած ես հայկական անուններ: Շատ լաւ, ե՞րբ հաստատուեցար Միացեալ Նահանգներ:

Նորայր - 1997 թուականին ես եւ տիկինս եկանք ամերիկա եւ հաստատուեցանք Գալիֆորնիոյ մէջ: Սա ալ ըսեմ որ չորս զաւակներս ալ ծնած են հոս եւ անշուշտ անմիջապէս ստացան ամերիկեան հպատակութիւն: Սա իսկապէս մեծ բախտաւորութիւն մըն է:

Գերոգ - Գիտեմ որ ասպարեզով հայերէն լեզուի ուսուցիչ ես: Ես շատ տպաւորուած եմ քու մէկ արտայայտութիւնովդ թէ՛ «Հայերէնի ուսուցիչ ըլլալը սփիւռքի մէջ եւ կոչում է եւ հպարտութիւն»: Հիմա ուրեմն կրնա՞ս մեզի թուել թէ ո՞ր հաստատութիւններուն մէջ՝ հայերէն լեզուի ուսուցչութիւն ըրած ես:

Նորայր - Անշուշտ: Երկու տարի (2004-2006), Մոնթեպելլոյի Մետրոպէան երկրորդական վարժարանին մէջ: 14 տարի (2006-2020), Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Փաստաւրանայի վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանին մէջ, իսկ 2020-էն սկսեալ՝ Փաստաւրանայի պետական Պլէր երկրորդական վարժարանի նորաբաց «Հայկական Ճեմարան»-ին մէջ:

Գերոգ - Որքան գիտեմ վերոյիշեալ ճեմարանի ստեղծման նախաձեռնութիւնը քու կողմէն, չե՞մ:

Նորայր - Ոչ բոլորովին, բացատրեմ: Երբ ՀԲԸՄ-ի վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանը փակուեցաւ, աշակերտները մէջտեղ մնացին: Ուրեմն աշակերտ մը, ծնող մը եւ ես գացինք Փաստաւրանայի Դպրոցներու ցանցի վարչութեան եւ խնդրեցինք լուծում մը: Լուծումը հետեւեալն էր, Bilingual Program Armenian Academy, Պլէր վարժարանին էջ: 50 աշակերտով սկսանք եւ անցեալ տարի ունէինք 70 աշակերտ:

Գերոգ - Հայերէն լեզուի կողքին, ի՞նչ նիւթեր կը դասաւանդէք:

Նորայր - Նախ ըսեմ որ մենք ունինք երեք դասարան՝ սկսնակ, միջակ եւ յառաջադէմ: Իսկ հայերէնի կողքին մենք կը դասաւանդենք հայկական պար եւ ունինք հայկական ակումբ մը «Հայկ» անունով:

Առաւել, մենք ունինք տարեկան տօնացոյց մը: Ըստ որուն՝

- * Սեպտեմբեր ամսուն մենք կը տօնախմբենք Հայաստանի Անկախութիւնը:
- * Հոկտեմբեր ամսուն մենք կը տօնախմբենք հայ մշակոյթը:
- * Նոյեմբեր ամսուն՝ մենք կը հրահրենք հիւր մը, որ աշակերտներուն ներկայացնէ իր նախընտրած նիւթը:
- * Դեկտեմբեր ամսուն մենք կը տօնախմբենք Սուրբ Ծնունդը եւ աշակերտները կը խոստովանին իրենց մեղքերը ու կ'ստանան հաղորդութիւն:
- * Փետրուար ամսուն մենք կը տօնախմբենք Տեառնդառաջը, խորոյհանգիստով եւ պարերով:
- * Ապրիլ ամսուն մենք կը յիշատակենք Հայոց Յեղափոխութիւնը: Մեր աշակերտները դպրոցէն կը քալեն դէպի Փաստաւրանայի Յուշարձանը, ուր տեղի կ'ունենայ ոգեկոչում եւ պատշաճ յայտագիր:
- * Մայիս ամիսը յատկացուած է «Վերջին Զանգ»-ին, այսինքն հրաժեշտի: Ծրջանաւարտ դասարանը կը պատրաստէ «Յիշողութեան Արկղ»-ը, ուր կ'ամփոփուի յիշատակներ եւ որ պէտք է բացուի տարի մը ետք: Իսկ հայկական պարով կը վեջանայ յայտագիրը:

Գերոգ - Գիտեմ որ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Շաբաթեայ վարժարանին Տնօրէն ալ էք: Կրնա՞ք մեզի տեղեկութիւն տալ այդ մասին:

Նորայր - Շատ սիրով: Ուրեմն, 2009 թուականին՝ այդ պաշտօնը վստահութեամբ ինձի, Առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանին կողմէ: Մենք ունինք 35 աշակերտ եւ չորս ուսուցիչ:

Առ ի գիտութիւն ըսեմ որ Առաջնորդարանի հովանաւորութեամբ՝ Գալիֆորնիոյ մէջ կը գործեն 17 Շաբաթօրեայ դպրոցներ: Մեր դպրոցը թիւով ամենափոքրն է, սակայն մենք միակն ենք որ մեր մօտ հայերէն լեզուի դասաւանդութիւնը կ'ընթանայ Արեւմտահայերէնով:

Գերոգ - Իսկ ինչո՞ւ ձեր դպրոցը կոչուեցաւ «Փեթակ»:

Նորայր - Անցեալ տարի, Սրբազան հայրը թելադրեց որ Շաբաթօրեայ դպրոցները ունենան իրենց յատուկ անունները: Ես «Փեթակ» ընտրեցի, հետեւեալ պատճառաբանութեամբ:

Դպրոցը փեթակն է, աշակերտները մեղունները եւ անոնց աշխատանքի արդիւնքը՝ հայերէն սորվելու, մեղրի նման անուշ:

Գերոգ - Իսկապէս շատ յարմար անուանակոչում մըն է: Հիմա անցնինք ուրիշ նիւթի մը: Ե՞րբ սկսար դպրոցական աշակերտները Հայաստան տանիլ, ամառները:

Նորայր - Ես՝ ինը տարի բաճրագոյն դասարանի աշակերտները տարած եմ Հայաստան, երկու շաբաթով: Անոնք՝ այն ինչ որ սորված են Հայաստանի պատմական վայրերուն մասին, հոն ակննատեսի աչքով կը դիտեն զանոնք եւ այսպէսով կը հաղորդուին ցեղին ձայնով եւ կ'ապրին անոր կանչով:

Գերոգ - Լսեցի որ վերջերս ասպարեզային նոր պարտականութեամբ մըն ալ բեռնաւորուած ես: Կրնա՞ս այդ մէկը յստակացնել մեզի:

Նորայր - Այո, ինչու չէ: Ուրեմն, Պոլսոյ մէջ «Բաց Զայ-

նասիրու» անունով կենդանի հաղորդում մը (live broadcast) կայ թրքերէն լեզուով եւ Ակոս թերթին տուած են շաբաթը 1.5 ժամ որ սփռէ իր հաղորդումը: Իսկ Ակոս թերթը ինձմէ խնդրեց որ այդ յատկացումին մէկ երրորդը՝ այսինքն շաբաթական կէս ժամ, ես օգտագործեմ իմ նիւթերու համար:

Գերոգ - Իսկ ի՞նչ եմ քու նիւթերդ, որով յայտագիր կը պատրաստես:


Նորայր - Հիմա թույլ տուէք որ բացատրեմ: Ես կ'ընտրեմ Միջնադարեան հայ աշուղներ ու տաղասացներ, որոնք կու գան Արեւմտեան Հայաստանի քաղաքներէն եւ գիւղերէն: Օրինակ՝ Վանեցի Նահապետ Քուչակը, Մարտիրոս Խարասարցին (Խարասար շրջանէն) եւ Դաւիթ Սալաձորցին (Սալաձոր շրջանէն) եւ կը ներկայացնեն անոնց գործերը:

Իսկ հիմա պիտի ներկայացնեմ նաեւ կիներ, որոնք եղած են երաժիշտներ եւ բանաստեղծուհիներ: Օրինակ՝ Սահակուլիս եւ Խոսրովիդուլիս ու պիտի ներկայացնեմ անոնց գործերը:

Այս բոլորը կ'ընեմ անոր համար որ այդ քաղաքներու կամ գիւղերու մէջ ծնած բնակիչներն ու անոնց զաւակները հպարտ զգան որ իրենք հայերեկիցներն են՝ արուեստի աշխարհի այդ հսկաներուն:

Իսկ այս շաբաթական հաղորդումները կ'ունենան ինչ թէ միայն հայեր՝ թուրքերոյ տարածքին, այլ նաեւ այն հայերը ալ որոնք թուրքերէնով լեզուով են Հոլանտա, Գերմանիա եւ Եւրոպական այլ երկրներ:

Գերոգ - Ծնորհակալութիւն Պարոն Տատուրեան՝ այս խիստ շահեկան հարցազրոյցի համար: Յաջողութիւն մեր սրբազան առաքելութեան համար:




St. Gregory Armenian Apostolic Church Men's Forum
(Ladies & Families Always Welcome) DISTINGUISHED SPEAKER SERIES

Thursday, October 24, 2024 – 6:30 P.M.

Special Guest Speaker:

L.A. COUNTY DISTRICT ATTORNEY CANDIDATE NATHAN HOCHMAN

Nathan To Address The Armenian Community



Former Positions Held / Background

- * U.S. Assistant Attorney General
- * U.S. Federal Prosecutor
- * L.A. Ethics Commission President
- * Juris Doctor Degree Stanford Law School

TOPICS OF DISCUSSION WITH Q & A

- * Restore Public Safety In L.A. County
- * Ensure Justice Is Served To All L.A. County Residents
- * Restore The Integrity & Trust Back To The L.A. District Attorney's Office
- * Bring Back Accountability & Proportionate Consequences In Filing Appropriate Charges Against Violent, Repeat Offenders

Restoring The Priority Of Protecting Victims' Interests Instead Of Criminals' Interests

Retail Thefts (Smash & Grabs), Sentencing Enhancements, Release With No Bail, Home Burglaries, Auto Burglaries, Fentanyl and More... Nathan Will Advise On What He Will Do & Answer Questions

For a detailed outline of Nathan's plans to save L.A. as District Attorney please visit:
nathanhochman.com/blueprint-for-justice

RSVP'S A Must! Wine, Catered Dinner & Dessert Included Church Donation \$35

To pay online via credit card, venmo/paypal/etc.: <https://square.link/u/v8vDuTbJ>

CONTACT: Church Office: 626-449-1523 Email: office@stgpas.com or gourdikian@aol.com

Sponsor: A Dinner in Memory of a Loved One, a Birthday, an Anniversary, in Recognition of a Friend or Family Member, a Graduation & for any Other Event. Please Contact: gourdikian@aol.com

ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Collaborative Learning Center-ի Հողօրհնէքի Արարողութիւնը



Սոյն թուականի Սեպտեմբերի 18-ին Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի նախագահութեամբ կատարուեց ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Collaborative Learning Center-ի հողօրհնէքի արարողութիւնը:

Միջոցառմանը ներկայ էին մի շարք անձեր, որոնք իրենց ազնիւ ծառայութեամբ մշտապէս աջակցել եւ իրենց զօրակցութիւնն են բերել ՀԲԸՄ-ի հայանպաստ աշխատանքներին: Մի շարք ողջույնի եւ գնահատանքի խօսքերից յետոյ հրաւիրուեց Գերաշնորհ Տէր Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանը, ներկաներին իր պատգամն ու օրհնութիւնը փոխանցելու: Յովնան Սրբազանը երախտիքի եւ գնահատանքի խօսքեր փոխանցեց ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան փոխնախագահ եւ 30 տարիներ ինամակալ մարմնի ատենապետ Տիար Սիւնան Սիւնանեանին, ներկայ ինամակալ մարմնի ատենապետ Տիար Գէորգ Զօրեանին, ամէնօրեայ վարժարանի տնօրէն Տիար Տէյվիտ Ղուկասեանին, բարերարներին եւ աջակիցներին, հո-

գաբարձութեան խորհրդի անդամներին, տնօրինութեանը, աշխատակազմին ու աշակերտներին, ընդգծելով նրանց անշահախնդիր նուիրում ու պատրաստակամութիւնը հանդէպ Հայ Բարեգործական Ընդհանուր միութեան առաքելութեան:

Սրբազան Հայրը մասնաորբար անդրադարձաւ նաեւ պատուոյ հիւր մեծագնիւ Քրիս Սիմոնեանին, ով Ազգային բարերար Տիար Ալեք Մանուկեանի թոռնուհին է եւ հաւատացողն ու աջակիցը իր նախորդների հաեանպաստ տեսիլքի: Սրբազան Հայրը մեծապէս գնահատեց բարերարուհու նուիրումն ու պատրաստակամութիւնը, որը միտուած է մեր ազգային կեանքի զօրացման եւ ամրապնդման ազնիւ աշխատանքներին եւ միաժամանակ մաղթեց, որ Աստուած երկար տարիներ ի կեանք շնորհի նրան, որպէսզի շարունակի իրականութեան կոչել այն երազներն ու տեսիլքները որոնք ունէին իր նախորդները:

Այնուհետեւ, «Պահպանիչ» աղօթքով փակուեց հողօրհնէքի հանդիսութիւնը:

«Փեթակ» Շաբաթօրեայ Դպրոցը Տօնեց Հայաստանի Հանրապետութեան Անկախութիւնը



21 Սեպտեմբեր 2024, Շաբաթօր, Քալիֆորնիոյ Փասատենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Փեթակ» շաբաթօրեայ դպրոցը իր աշակերտներով, ծնողներով եւ հիւրերով տօնեց Հայաստանի հանրապետութեան անկախութեան 33 ամեակը:

Ամենամեայ այս տօնակատարութիւնը սկսաւ մանկապարտէզի սանիկներու, որպէս հայրենիքի փոքրիկ պաշտպաններ, համաչափ քայլերով սրահ մուտքով: Ապա բոլոր ներկաները յոտնկայս երգեցին Հայաստանի քայլերգը: Բ. դասարանի աշակերտներ Արէն, Սանահին, Նիքոլըս եւ Արեւը իրենց քաղցրիկ եւ ցնծուն ձայնով արտասանեցին «Մեր անուշիկ Հայաստան» ոտանաւորը եւ ըսին. «Սէգ սարերդ կը սիրենք / Օդդ ու ջուրդ կը սիրենք / Քաղցրիկ սիրով մանկական / Մեր անուշիկ Հայաստան»: Աւագ դասարանի երկու աշակերտուհիներ, Քէյլա եւ Օտէթ, արտասանեցին Պարոյր Սեւակի «Իմ Հայաստան» բանաստեղծութիւնը եւ վեհաձայն գոչեցին. «Իմ քաղցրանուն, / Իմ բարձրանուն, / Իմ տառապած, / Իմ փառապանծ... / Սրի պատեան, / Միրոյ մատեան՝ / Միշտ հին ու նոր իմ Հայաստան»:

ընտրուած լուսանկաներ, ինչպէս անկախ Հայաստանի զինանշանը, դրոշակը, Ազգային ժողովը եւ պետականութեան այլ նշանները, մինչ լսեցին իրենց տարիքին յարմար բացատրութիւններ: Ապա, աշակերտները բեմ բարձրացան եւ դաշնակահարուհի էլմիրա Սիմոնեանի նուագածութեամբ երգեցին «Անուշ հայրենիք» եւ «Հայրենի երգենք» երգերը: Յայտագիրը աւարտեցաւ Տէրունական աղօթքով:

Որպէս քաղցր հրաժեշտ՝ ներկաները վայելեցին անկախութեան թեմայով ձեւաւորուած կարկանդակէ կտոր մը:

Այս տարի WASC-ի կողմէ վարկաւորուած «Փեթակ» դպրոցը, վայելելով Արեւմտեան Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանի օրհնութիւնը եւ հովանաւորութիւնը, բոլոր տարիքի եւ լեզուական ամէն մակարդակի հայորդիներուն կու տայ հայեցի դաստիարակութիւն: Լեզուի դասերուն գուգահեռ ան ունի թատրոնի, երգի եւ պարի յատուկ ժամեր: Դպրոցի նպատակն է, ընտանեկան ջերմ միջավայրի մէջ հայ աշակերտին ազգային եւ հոգեւոր ինքնութիւն տայ: Արձանագրութեան եւ յաւելեալ տեղեկութեան համար դիմել՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի. (626) 449-1523, կամ՝ saturdayschool@stgpas.com

Ի Խնդիր Հայ Լեզուի Պահպանման

Շարունակուած էջ 16-էն

վտանգը սփիւռքահայուն համար բացայայտ է. հարց մը, որ խօսելով, գիտակցելով եւ մտահոգուելով չի դարձանուիր, չի լուծուիր, այլ որչափ հնարաւոր է, դրական աշխատանքով: Իսկ դրական աշխատանքը կ'ենթադրէ հայ դպրոցներ հիմնել՝ հայերէն խօսելու, հայերէն գրելու եւ կարդալու համար: Դրական աշխատանքը կը պահանջէ նաեւ հայ տունը իրօք հա՛յ տուն ըլլայ, ուր հայկական մթնոլորտ տիրէ, ուր խօսակցական լեզուն հայերէն ըլլայ, ուր տիրեն հայկական աւանդութիւններն ու բարեմասնութիւնները, ուր հայ լեզուով փոխանցուի հայու ոգին ու հայկական արժէքները:

Հայ ծնողներ կոչում ունին իրենց տունները «փոքրիկ Հայաստան»ի մը վերածելու իրենց գաւակներուն սրտին ու մտքին մէջ

հաստատելու համար հայրենի բարքերն ու մայրենի լեզուն:

Եթէ իրօք համոզուած ենք որ հայ լեզուն մեր ազգային գոյութեան ողնասիւնն է եւ հայ մշակութի պահպանման ամէնէն զօրեղ միջոցը, այն առեւ հայերէնը պէտք է դառնայ մեր աւօրեայ խօսակցական լեզուն մեր տուններուն, վարժարաններուն, հաւաքներուն եւ անմիջական շրջանակներուն մէջ:

Հայոց Լեզուի պահպանումը իւրաքանչիւրին ուսերուն վրայ դրուած անյետաձգելի ու առաջնահերթ պարտականութիւն ըլլալու է: Հիմա մե՛րն է կարգը դառնալու Չահակիրը մեզի յանձնուած աւանդին: Ոչ թէ միայն պահել զայն որպէս գանձ անկորնչելի, այլ զայն կեանքի կոչել, մեր գաւակներուն կեանքին մէջ: Այո՛, թող Մեսրոպածին բարբառով հայ գիրը եւ անոր հնչեղ մեր լեզուն խօսիլը ըլլայ մեզի հպարտութիւն ու պատիւ:

Նորայր Տատուրեան Տիպար Ուսուցիչը

Շարունակուած էջ 17-էն

Նորայր - Շնորհակալութիւն ձեզի՝ որ ինձի ընծայեցիք այս առիթը:

Եզրակացութիւն: Ձեք կընար ուրանալ երբեք որ Պարոն Տատուրեան բախնդիր եւ խստապահանջ ուուցիչ մըն է որ ջանք չի ինայել իր աշակերտներուն մտքերը թրծելու հայեցի դաստիարակութեամբ եւ սրտերը լեցնելու

ազգային ոգիով: Պատահական չէ ուրեմն որ ան ստացած է «Պատուոյ Մրցանակ» Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութենէն՝ Հայրենի պահպանութեան, զարգացման եւ դասաւանդման մէջ: Ան ստացած է նաեւ «Երախտագիտութեան Վկայագիր» Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութենէն: Պատիւս արժանաւորաց!

www.massispost.com
Daily News Updates

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ընդդիմութիւնը «Թէժ Աշուն» էր Խոստանում

Շարունակուած էջ 2-էն

խօսում Մայիսի 9-ի հանրահաւաքի մասին (Աջապահեանն էլ, ի դէպ) եւ ընդգծում, թէ այն ամենաբազմամարդ հաւաքն էր՝ ընդդիմութեան՝ նախորդ շարժումների ժամանակ տեղի ունեցած հաւաքների համեմատ: Արդ, հարց է ծագում՝ այդ 32 հազար հոգին Բագրատ սրբազանին հաւատացած, նրան աջակցող հանրային ռեսուրսն էր, թէ՞ նախկին երկու նախագահներինը միասին վերացրած (մարդայ՝ 15 հազար):

Նկատենք, որ 32-հազարանոց այդ հանրահաւաքում մեծ թիւ էին կազմում նաեւ ԼՂ-ից բռնի տեղահանուածները, որոնք եթէ դէպքերի բերումով ՀՀ-ում չլինէին, չմասնակցէին, ապա մեծ հաւանականութեամբ «սրբազան շարժման» հանրային աջակիցների թիւը 32 հազարի էլ չէր ձգելու եւ գուցէ ունենար նոյնքան մասնակցութիւն, որքան «դիմադրութեան» շարժումը:

Դատելով վերջին՝ Հոկտեմբերի 2-ի հաւաքի չափազանց սակավամարդ լինելուց՝ կարելի է եզրակացնել՝ կա՞մ նախկին նախագահներն արդէն իսկ «խռովել», իրենց ռեսուրսն առել ու հեռացել են շարժումից (եւ, այսպէս ասած՝ տակը մնացել են գուտ Գալստանեանին աջակցողները), կա՞մ էլ նրանց հանրային աջակցութեան աստիճանը մաշուելով՝ հասել է կատաստրոֆիկ ցածր աստիճանի՝ 32 հազարից՝ 2 հազարի:

Մի հանգամանք էլ. Միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) ամիսներ առաջ (Մարտին) հրատարակել էր հանրային կարծիքի ուսումնասիրման արդիւնքները, ըստ որի՝ Ռոբերտ Քոչարեանին վստահում է հարցմանը մասնակցողների 2%-ը: Սերժ Սարգսեանը, ի դէպ, սոյն սոցհարց-

ման արդիւնքներից դատելով, անգամ չէր ներառուել հասարակութեան շրջանում վստահութիւն վայելող գործիչների ցանկում:

Եթէ առաջիկայ կիրակի լինէին ընտրութիւններ, ապա, ըստ IRI-ի, հարցուածների միայն 3%-ը կը քուէարկէր «Հայաստան» դաշինքի օգտին, իսկ «Հայաստանի հանրապետական կուսակցութեան» օգտին՝ 2%-ը:

2-տոկոսանոց հանրային վստահութիւն ունեցող այս գործիչները (դա էլ հօ մենք չենք ասում, միջազգային կազմակերպութիւնն է վկայում) արդեօք կարո՞ղ էին քաղաքական շարժում առաջնորդել, հանրային աջակցութիւն գնեցնել ու յաջողութեան հասնել: Հազիւ թէ: Դրա համար ունենք այն, ինչ ունենք՝ որպէս «ֆուտլիար» օգտագործուած եկեղեցական, որին, փաստօրէն, ելնելով Աջապահեանի խօսքերից, ներշնչում է, աւելի ճիշտ՝ երեսուտանք են անում, թէ՛ «մենք, մեր ռեսուրսով, որ չլինենք, դու կորած ես, շարժումը կը գցես ոտքիդ՝ դրանից բխող հետեւանքներով»: Ինչ-որ բան յուշում է, որ մօտ ժամանակներս այդ՝ ենթադրեալ հետեւանքների ակնատեսը կը լինենք:

Ի դէպ, դատարան են ուղարկուել Մայիսի 9-ի հանրահաւաքին մասնակցելու համար մարդկանց նիւթապէս շահագրգռելու փաստով յարուցուած քրէական գործերով մեղադրական եզրակացութիւնները: Մայիսի 9-ի բազմամարդ հանրահաւաքին մասնակիցների մի մասը, ստացում է, փողի դիմաց է մասնակցել: Այնպէս որ, նոյնիսկ այդ 32 հազար թիւը ապահովուել է խարդախութեամբ՝ կեղծելով շարժման հանրային աջակցութեան իրական պատկերը:

Շարժում մի ասա, քաղաքական տրագիֆարս ասա:
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Երբ Անհաւասար Են Ուժերը

Շարունակուած էջ 6-էն

նութիւն պետական ղեկավարի մը կողմէ, որ թշնամիին գծած ճամբով ծուղակը չ'իջնար եւ ոչ ալ իր ժողովուրդը կը տանի դէպի արկածախնդրութիւն, որուն մէջ կրնան դերակատար ըլլալ Ազրպէյճանի կողքին Թուրքիա եւ Ռուսիա:

Երկու ուղղութեամբ աշխատող ներկայ իշխանութիւնը, թէ՛ աշխարհին բացուող դիւանագիտութեամբ եւ թէ՛ ալ ազգային բանակի սիստեմաթիւք արդիակառնացմամբ, կը թուի թէ կրցած է առայժմ կասեցնել յոխորտացող Ազրպէյճանի ներթափանցումը Հայաստանի սահմաններէն ներս:

Եւ եթէ յաճախ կը խօսուի «Պատմական Հայաստան»ի մը եւ «Իրական Հայաստան»ի մը միջեւ գիծ քաշելու մասին, այդ կը կատարուի ոչ թէ մեր պատմական սրբութիւնները անգիտաբար կամ մոռնալու մտադրութեամբ, այլ կը

կատարուի դիւանագիտութիւն խաղալով (բան մը, որուն փորձառութիւնը երբեք չէ ունեցած հայր անցեալին), որպէսզի թուրքին եւ ազերիին պատրուակ չտրուի նորէն պատերազմ մղելու Հայաստանի դէմ:

Չես գիտեր ինչ շահերէ մեկնած ոմանք ընդդիմութիւն կը քարոզեն այս իշխանութեան դէմ՝ անգիտանալով, որ դասակարգային պայքար մըն է մղուածը երկու կողմերու միջեւ. մէկ կողմը կայ համեստ եւ հասարակ հայրենի քաղաքացին, որ խաղաղ ու անդորր ապրելու փափաքը ունի, եւ հակառակ կողմը կայ այդ համեստ քաղաքացին անտեսած եւ չարաչար շահագործած աթոռամոլներու հաւաքածոյ մը, որ իր դիրքերը կորսնցուցած ըլլալու դառնութիւնը կը զգացնէ՝ աշխատելով ի վնաս մեր ժողովուրդի շահերուն:

Անհաւասար ուժեր ունենալու մեր այս խեղճ վիճակը հին է՝ ինչպէս իրենք:

Ամէն Օր Ուրբաթ Է...

Շարունակուած էջ 15-էն

կ'ապրին, ուրիշներ ինկած են շուտուածի եւ անստուգութեան ծալքերուն մէջ:

Ներշնչող իրականութիւնը կը պակսի: Մեզմէ շատեր խոյս կուտան նոյնիսկ լոյսէն եւ այս իրականութիւն կոչուածէն: Դարձած ենք ամէնօրեայ սովորութիւններու գերին: Ամէն օր նոյնանման Ուրբաթ մըն է որ կ'ապրինք: Չենք անդրադառնար որ փոխուած են աշխարհի ապրելու, մտածելու եւ գոյատեւելու պայմանները: Մեր կեանքը դարձած է ամէնօրեայ ճակատամարտ: Արդ, որո՞ւ դէմ պէտք է բարձրացնել բողոքի դրօշը: Իրականութիւնը անողոք է եւ ո՛չ թէ ներշնչող: Ո՛չ ոք գիտէ թէ նման քայլերով մենք վաղուան լոյսին ո՞ւր հասած պիտի ըլլանք: Ներշնչող իրականութիւն կը փնտռուի այս օրերուն:

Ի՛նչ...ե՞րբ պիտի թեւակոխենք նոր հանգուան:

Չենք կրնար ամէն բան բախտին ձգել: Ատոր իրաւունքը չունինք: Հաստատապէս մեր ուղեղները լուսաւորող շողերու կարիքն ունին: Նորոգելու եւ նորոգուելու առիթ ու ճամբայ տանք:

Այս բոլորը հիմա եւ տեւաբար հրապարակով հնչեցնելը անհրաժեշտ պայման նկատած ենք, որովհետեւ երեւոյթները ապագայի հաշուոյն մտահոգիչ են նոյնիսկ վտանգաւոր կացութիւններ ստեղծող:

Մարդիկ կ'արդարանան «մարդուժի տագնապ ունինք» բացականչելով, եւ ամէնէն վատը՝ «փոխարինողներ չենք գտած... չունինք...» արդարանալով: Կարծես ստիպուած կ'ապրինք գրուած եւ անգիր երգի նման: Սկսած ենք առաջնորդուիլ: Երէկի մեր երազները քնացուցած ենք: Լաւ չիշենք,

այս ընթացքով, կամովին կը դաւաճանենք հայ կեանքին: Արդեօ՞ք մտածած ենք թէ ինչպէ՞ս ազգը իր ամբողջութեամբ այս ընթացքով պիտի կարենանք պահել: Չենք տեսներ թէ նոր սերունդը անդիկի պէս դուրս կը թափի մեր ափէն: Կարծես ձեռով մը ամէն տեղ հայ կեանքը իր վայրէջքը կ'ապրի: Ու չենք զգար որ այս վայրէջքը անկում ալ կը նշանակէ: Ահա թէ ինչո՞ւ ազգային մեր կեանքի հոլովոյթը դժուարացած է: Մեր ներկայ կեանքը մեզ հրած է դէպի հիասթափութեան խորշերը:

Տաք հով պէտք է տալ հայու ազգային կրակին, որպէսզի շարունակէ իր «փայտերուն» կայծկլտուքը, որպէսզի բոլորով չմսինք: Մեզի համար էական է մեր ապրած մթնոլորտը լեցուի նոր կեանքով, որպէսզի ունենանք հաճելի եւ դրական շարունակութիւն:

Վերջապէս իջնելու ենք իրական աշխարհ, ազատուած զանազան արգելքներից, կաշկանդումներից, մտայնութիւններից, հինցած կանոններից եւ պարտադրանքներից: Այս բոլորը, որպէսզի հայու մեր հոգին արթուն մնայ: Ժանգ չկապէ: Որովհետեւ այս ընթացքով կրնայ փճանալ: Իսկ նոյն այդ ժանգը սրբելու համար, տրամաբանութիւն եւ գիտակցութիւն է պէտք: Մեր ինքնութեան հաւատարիմ մնալ է պէտք:

Իբրեւ մտահոգ հայեր, ամէն օր իրապէ՛ս կը սպասենք որ մեր կեանքին դիմաց բացուին նոր հորիզոններ: Բայց երբեք չենք անդրադառնար որ նախ այդ մէկը մեր կամքով, մեր մտածելակերպով եւ մեր դրական ներդրումով միայն կրնայ իրականանալ:

Անոր համար բոլորս ալ անձկութեամբ ու կարօտով կը սպասենք որ մեր «Ուրբաթէն ետք, Շաբաթը գայ անպայման...»:

Գերշո S. Խաժակ Արքեպիսկոպոս

Շարունակուած էջ 15-էն

կան ներկայացուցիչներու, յատկապէս կիներու, մասնակցութիւնը դէպի յառաջ կարեւոր քայլ է, որ կը նպաստէ Եկեղեցւոյ ներսը աւելի ներառական որոշումներ կայացումին:

Աշխատանքային օրակարգի հիմնահարցերը

Հգօրացնել աշխարհականներու դերը Եկեղեցւոյ կառավարման եւ որոշումներու կայացման ընթացքին:

Առերեսուիլ կղերապաշտութեան՝ խթանելով առաջնորդութեան աւելի խոնարհ եւ ծառայութեան նուիրուած տիպարը:

Կիներու դերը Եկեղեցւոյ մէջ, կեդրոնանալով անոնց առաջնորդական դերի ընդլայնման:

Միսիոներական յանձնառութիւն՝ քննարկելով, թէ Եկեղեցին ինչպէս կրնայ առաւել աջակցիլ լուսանցքային գօտիի մէջ գտնուող համայնքներուն եւ դառնալ արդարութեան եւ հաշտութեան ձայնը:

Մինտըր միայն խորհրդածութեան պահ չէ, այլ նպատակ ունի հարթել ճշգրիտ քայլեր դէպի աւելի ներառական, սինտոալ եւ իր առաքելութեամբ ուղղորդուող Եկեղեցի:

Մասնակցութիւն Երիւնճիկ եւ եղբայրական ոգիի ներքոյ

Յատկանշական է, որ այս սինտոսին կը մասնակցին նաեւ փոքր թիւով տարբեր քրիստոնէական յարանուանութիւններու ներկայացուցիչները, ինչ որ կը կարեւորէ անոր էքլեմենիկ բնոյթը: Անոնց շարքին է Սուրբ Աթոռի մէջ Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչ Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանը. Սրբազանը կը մասնակցի նիստերուն որպէս «Երեսօրական պատգամաւոր»՝ Ն.Ս.Օ.Տ.Ֆ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ:

Սրբազանին ներկայութիւնը կը վկայէ էքլեմենիկ համագործակցութեան եղբայրական ոգիի մասին՝ ընդգծելով քրիստոնէական համայնքներու միջեւ միասնականութեան եւ փոխգործակցութեան կարեւորութիւնը ընդհանուր մարտահրաւէրները դիմակայելու համար:

Մինտոսի ժողովի բացման նստաշրջանի ընթացքին Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան հնարաւորութիւն ունեցած է Ֆրանչիսկոս Քահանայապետին փոխանցել Գարեգին Բ. Վեհափառի ողջոյններն ու լաւազոյն մաղթանքները:

Ճանապարհի դէպի Նորոգում

Ակնյայտ է, որ շուրջ մէկ ամիս շարունակուող Մինտըր կենսարար գործընթաց է Եկեղեցւոյ նորոգման ճանապարհին: Այս ժո-

ղովի քննարկումներն ու անդրադարձները պիտի ձեւաւորեն Եկեղեցւոյ կառավարման, հովուական առաջնահերթութիւններու եւ միսիոներական յանձնառութեան ապագան: Մինտոսի աւարտէն ետք սպասուող վերջնական գեկոյցը կ'ուղղորդէ Եկեղեցին փորձելով իրականացնել աւելի սինտոալ կառավարման եւ ներգրաւուածութեան

ձեւեր բոլոր մակարդակներով: Մինտոսի աշխատանքները, որոնք պիտի շարունակուին նաեւ 2025 թուականին, նպատակ ունին տեւական ներդրումներ բերել Եկեղեցւոյ առաքելութեան մէջ՝ խթանելով միասնութիւն, մասնակցութիւն եւ աւետարանում հետզհետէ առաւել բարդ եւ բաժնուած աշխարհի մէջ:

«Լիվերփուլ» Յաղթեց Եւ Շարունակեց Մնալ Առաջին Տեղը

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts	Last 5
1 Liverpool	7	6	0	1	13	2	11	18	🟢🟢🟢🟢🟢
2 Man City	7	5	2	0	17	8	9	17	🟢🟢🟡🟡🟢
3 Arsenal	7	5	2	0	15	6	9	17	🟡🟢🟡🟢🟢
4 Chelsea	7	4	2	1	16	8	8	14	🟡🟢🟢🟢🟡
5 Aston Villa	7	4	2	1	12	9	3	14	🟢🟢🟢🟡🟡

Ֆուտբոլի Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 7-րդ հանգրուանին «Լիվերփուլը» Լոնտոնի մէջ հիւրընկալեցաւ «Քրիսթալ Փելասի» կողմէ եւ առաւելութեան հասաւ 1:0 արդիւնքով:

9-րդ վաչրկեանին աչքի ինկաւ փորթուկալացի յարձակող Տիոկո ժոտան:

7 խաղէն յետոյ «Լիվերփուլը» 18 կէտով առաջատարն է եւ 1 կէտ առաջ է երկրորդ-երրորդ տեղերը գտնուող ախոյեան «Մանչըսթըր Սիթիէն» ու փոխախոյեան «Արսենալէն»:

«Արսենալի» Եւ «Մանչըսթըր Սիթիի» Յաղթանակները

Ֆուտբոլի Անգլիոյ առաջնութեան 7-րդ հանգրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթի» ընդունեց «Ֆուլհամին» եւ առաւելութեան հասաւ 3:2 արդիւնքով:

Փոխախոյեան Լոնտոնի «Արսենալը» իր դաշտին վրայ մրցեցաւ «Սաութհեմփթընի» հետ եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

«Չելսի» Հաւասար Խաղցաւ «Նոթինգհեմի», «Մանչըսթըր Եունայթըտը»՝ «Ասթոն Վիլայի» Հետ

Անգլիոյի առաջնութեան 7-րդ հանգրուանին Լոնտոնի «Չելսի» ընդունեց «Նոթինգհեմ Ֆորեսթին» եւ բաւարարուեց հաւասար արդիւնքով՝ 1:1:

«Չելսի» 14 կէտով չորրորդն է: Նոյնքան կէտ ունի 5-րդ տեղը գտնուող «Ասթոն Վիլան», որ 0:0 արդիւնքով հաւասար խաղցաւ «Մանչըսթըր Եունայթըտի» հետ:

«Նոթինգհեմ Ֆորեսթն» ունի 10 կէտ եւ 9-րդն է: Մանչըսթըրեան խումբը 8 կէտով 14-րդն է:

«Ինթերին» Յաղթանակ Ապահովեց Տիրամի Հեթ-Թրիքը



Իտալիոյի առաջնութեան 7-րդ հանգրուանին ախոյեան «Ինթերը» Միլանի մէջ մրցեցաւ «Թորինոյի» հետ եւ յաղթեց 3:2 արդիւնքով:

Հեթ-թրիքի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Մարկուս Տիւրամը:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 77-րդ վաչրկեանին:

«Ինթերը» 14 կէտով երկրորդն է եւ 2 կէտ ետ է առաջատար «Նափոլէն»:

«Պայըրն Միւնիխ»-«Այմտրախտ» Խաղը Աւարտեցաւ Հաւասար Արդիւնքով

Գերմանիոյի առաջնութեան 6-րդ հանգրուանին առաջատար «Պայըրն Միւնիխ» հիւրընկալեց Ֆրանքֆուրտի «Այմտրախտին» եւ խաղը աւարտեցաւ 3:3 հաւասար արդիւնքով:

WTA. Էլինա Աւանեսեանը Գրաւեց 47-րդ Տեղը

Կանանց թենիսի ընկերակցութիւնը (WTA) հրապարակած է համաշխարհային դասակարգման աղիւսակը:

Հայաստանի ներկայացուցիչ էլինա Աւանեսեանը գրաւած է 47-րդ տեղը: Առաջատարը լեհ Իգա Շվյոնտեկն է:

Էլինա Աւանեսեանի այս տարուայ պարգեւավճարները կազմած են աւելի քան 800 հազար տոլար:

Լա Լիկա. Լամին Յամալը՝ Ամսուայ Լաւագոյն Խաղող

Սպանիոյ փոխախոյեան «Պարսելոնայի» 17-ամեայ եզրային յարձակող Լամին Յամալը ճանչցուեցաւ Լա Լիգայի լաւագոյն խաղող Սեպտեմբերին տեղի ունեցած հանդիպումներու արդիւնքով:

Անցած ամիս Լամին Յամալը Սպանիոյի առաջնութեան մասնակցած է 4 հանդիպման, նշանակած է 3 կոլ, կատարած 1 կոլային փոխանցում:

Ընթացիկ մրցաշրջանին ան գերմանացի Հանս-Տիթեր Ֆլիկի գլխաւորած խումբի հետ բոլոր մրցաշարերուն մասնակցած է 10 հանդիպման, նշանակած է 5 կոլ, կատարած 5 կոլային փոխանցում:

Լամին Յամալի պայմանագիրը «Պարսելոնայի» հետ նախատեսուած է մինչեւ 2026-ի Յունիսը:

Transfermarkt-ը անոր փոխանցման արժէքը կը գնահատէ 120 միլիոն եւրօ:



«Պարսելոնան» Յաղթեց Լեւանտովսկիին Հեթ-Թրիքի Շնորհիւ

Սպանիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին փոխախոյեան «Պարսելոնան» հիւրընկալեց «Ալավեսին» եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

Հեթ-թրիքի (երեք կոլի) հեղինակ դարձաւ 36-ամեայ լեհ յարձակուող Ռոբերտ Լեւանտովսկին, որուն երկու կոլային փոխանցում կատարեց 27-ամեայ պրագիլցի յարձակող Ռաֆինեան, մէկ կոլային փոխանցում՝ 23-ամայ սպանացի պաշտպան Էրիք Կարսիան:

«Պարսելոնան» 24 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Ռէալէն»:

«Ալավեսը» 12-րդն է՝ 10 կէտ:



Մատրիտի «Ռէալը» Ուժեղ Էր «Վիլյառեալէն»

Սպանիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին ախոյեան «Ռէալը» ընդունեց «Վիլյառեալին» եւ պարտութեան մատնեց գաջն՝ 2:0 արդիւնքով:

14-րդ վաչրկեանին ուրուկուացի կիսապաշտպան Ֆետերիքօ Վալվերտէն խորուաթ կիսապաշտպան Լուկա Մոտրիչի փոխանցումէն յետոյ գրաւեց մրցակիցի բերդը:

73-րդ վաչրկեանին պրագիլցի յարձակող Վինիսիուս ժունիորը կրկնապատկեց «Ռէալի» առաւելութիւնը: Կոլային փոխանցումը կատարեց Վալվերտէն:

Արքայական խումբը 21 կէտով երկրորդն է: Առաջատար «Պարսելոնան» է, որ ունի 24 կէտ:

«Պայըրն Միւնիխ» 14 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Նոյնքան կէտ ունի երկրորդ տեղը գտնուող «ՌԲ Լայպցիգը»: